

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتاك** جريدة يومية سياسية وأدبية - الدوة السؤولة، إيثاآرروشيان

1500 Լ.Ո. 76ԳՎ ՏԱՐԻ, ԹԻԻ 86 (21428) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 23 ՅՈՒՆԻՍ 2003 10 ԷՁ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ ՖԻՇԸՐ ԺԱՄԱՆԵՅ ԼԻՔԱՆԱՆ

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռչքա Ֆիշըրը երէկ յետմիջօրէին ժամանեց Լիբանան եւ ընդունուեցաւ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր տնօրէն Մոհամէտ Իսայի եւ Լիբանանի մէջ Գերմանիոյ դեսպան Ժիլյէլլա Սիբրարայի կողմէ:
Ֆիշըրը Յորդանանի մէջ մասնակցած էր խաղաղութեան միջազգային քառեակի խորհրդածողովին: Ան Պէյրութ կ'այցելէ հանդիպումներ ունենալու իշխանութեան երեք պետերուն, ինչպէս նաեւ քաղաքական այլ պաշտօնատարներու հետ:
Եռչքա Ֆիշըրը այսօր կը տեսակցի նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրիի հետ, որոնց հետ կը քննարկէ Լիբանան - Գերմանիա երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջանային իրարաձուլութիւնները:
Ֆիշըրը երէկ երկկողմանի հանդիպումներ ունեցաւ իր պաշտօնակիցին ժան Օպէյտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ: Քննարկուեցան յատկապէս Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի ծիրէն ներս ճամբորդութիւնն առնչուող հարցեր:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԵԾ ԴԱՐՈՒԱԾ ՍԸ ԴԱՍՅՆԵԼՈՎ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՈՒԺԵՐ ՄՊԱՆՆԵՑԻՆ ՇԱՄԱՍԻ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԸ՝ ԱՊՏԱԼԼԱ ՔԱՌԱՍՄԵՆ

Խաղաղութեան քարտէսը գործադրութեան դնելու կարելիութիւնը անգամ մը եւս հարցականի տակ առնուեցաւ, երբ Իսրայէլ սպաննեց Համասի ղեկավարներէն՝ Ապտալլա Քաուսամէն:
Քաուսամէի դէմ յարձակումը ողջունուեցաւ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի եւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի կողմէ, մինչ պաղեստինեան շրջանակներ դատապարտեցին, իսկ Համաս երդուեց հակադարձել:

Իսրայէլեան աղբիւրներ հաղորդեցին, որ Քաուսամէ սպաննուեցաւ Այսրյորդանանի Հեպրոն քաղաքին մէջ: Յիշեալ աղբիւրները ակնարկեցին, որ Իսրայէլեան սահմանապահ ուժերէն ընտրանի խմբակ մը Հեպրոն մտած էր ձերբակալելու համար Քաուսամէն, որ սակայն փորձած է փախուստ տալ: Իսրայէլեան ուժերը կրակ բացած են արգիլելու համար անոր փախուստը, սակայն հետապնդումի գործողութեան ընթացքին ան սպաննուած է. Քաուսամէ կը նկատուի Համասի գլխաւոր պատասխանատուն Այսրյորդանանի մէջ: Ըստ Իսրայէլեան աղբիւրներու, Քաուսամէ եղած է «ուղեղը» Իսրայէլի դէմ վերջին քանի մը գործողութիւններուն:

Համասի ղեկավար Ապտալլա Ռանթիսի, որ քանի մը շաբաթ առաջ մայապարծ փրկուած էր սպանութենէ, յայտարարեց, որ Քաուսամէի սպանութիւնը անպատիժ պիտի չմնայ: Ռանթիսի շեշտեց, որ սիրական սիւսերկչական գործողութիւններուն դէմ վրիժառու արարքներ պիտի կատարուին, այնքան ատեն որ Իսրայէլ կը

շարունակէ պաղեստինեան արիւն թափել:
Պաղեստինեան իշխանութեան արտաքին գործոց նախարար Նապիլ Շաաթ «ժխտական ու սարսափելի» որակեց Քաուսամէի սպանութեան արարքը: Շաաթ ակնարկեց, որ այսպիսի արարքներ պաղեստինցի ժողովուրդին կը յիշեցնեն Իսրայէլեան գրաւման տեղի երեւոյթները՝ սպանութիւն եւ բռնարարքներ: Շաաթ ընդունեց, որ Համասի ղեկավարին սպանութիւնը դժուարութեան դիմաց պիտի դնէ խաղաղութեան ճամբու քարտէսի գործադրութիւնը, սակայն պիտի չարգիլէ վայն: Ան ակնարկեց, որ ժամանակը հասած է գործադրութեան դնելու խաղաղութեան քարտէսը:

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնն ողջունեց Քաուսամէի սպանութիւնը եւ շնորհատրեց իս Ծարը՝ էջ 2

680 ԹՈՆ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆԻԻԹԵՐՈՒ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹԵԱՆ ԲՈՂԱԶԵՐԾՈՒՄ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Յունական ծովուծի մասնաշաղկատու ռուտեր երէկ յունական ջուրերուն մէջ կասեցուցին նաւ մը, որուն մէջ կը գտնուէր 680 թոն պայթուցիկ նիւթ:

Նաւը կը կրէր արհիւկեան Քոմոր կղզիներու հանրապետութեան դրօշակը: Տասնեակ մը մաքսանէզներուն շարքին էին երկու ապերիներ: Նաւը գրաւուած է մաքսանէզները ձերբակալուած են:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Հաւատալով, որ հայ ազգի պահպանման երաշխիքը սերունդներու կերտումն ու կազմաւորումն է, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, իր հիմնադրութենէն՝ 1920էն մինչեւ օրս տարած է հայկերտման ու մարդակերտման նուիրական առաքելութիւն: Երկար տարիներ նոյն վճռակամութեամբ գործած, սփիւռքահայութեան միտքը, հոգին ու կամքը խտացուցած «Բարձրացիր, բարձրացո՛ւր» նշանաբանին միջոցով հաւատարիմ մնացած ու անոր համոզումով առաջնորդուած Հ.Մ.Ը.Մ.ը, երէկ, Կիրակի, 22 Յունիսի երեկոյեան ժամը 6:30ին, իր մոկիլներով ու երէցներով, նորափոթ մարզիկներով ու ներկայացուցչական խումբերով եւ Հ.Մ.Ը.Մ.ին հաւատացող հարիւրաւոր հայտորդիներով նշեց իր հիմնադրութեան 85ամեակը:
Հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ե.Օ.Ս.Ս. Արամ Ա. վե-



ASHNAG

հափառ հայրապետին եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութեան, Պորժ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ կայացած փառատօնին ներկայ էին կաթողիկոսի ներկայացուցիչ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան, ՄԱՀԱԵՄԻ կեդրոնական մարմնի

ատենապետ վեր. Փօլ Հայտնաբեան, հայ կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխանորդ վարդապետ Եպ. Արզաբեան, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնեան, Հ.Յ.Գ. Բիւրոյի անդամներ Երուանդ Փամպուրեան եւ Ալլաքի Աճմեան, Հ.Յ.Գ. Կեդրոնական Կոմիտէի ներկա-

յացուցիչ Յովիկ Միսի-բարեան, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհան-

նիսեան, Պորժ Համուտի քաղաքապետ Անդ-

ժարը՝ էջ 3

րանիկ Մարրիեան, Այնճարի քաղաքապետ Սեպուհ Արզաբեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան անդամներ, Լիբանանի սկաւտական ֆետերասիոնի նախագահ Ռուբոյ Ասիւ եւ ֆետերասիոնի անդամ Մուսթաֆա Ապտէլ Ռասուլ, ազգային միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ ու խոնարհ ծողովուրդ:
Հ.Մ.Ը.Մ.ի շեփոխախումբին կողմէ հնչած Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու կըրոյթով ծածանեցան

ԹՐՔԱԿԱՆ ԼԱՐԱԽԱՂԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐՁԻՆ ՈՐՈՒԳԱՅԹՆԵՐԸ

ԱՆԳԱՐԱ ԿԸ ՓՈՐՁԷ ԻՐ ԸԱՐՑԵՐԸ ԼՈՒՅԵԼ ԸԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԸԱՅ ԴԱՏԻ ԸԱՇՈՒՅՆ

2.3.Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԻՏՍՍՈՐԳԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ 30 ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՆ

Կը բանախօսեն՝

ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
2.3.Գ. Լիբանանի Կ.Կի անդամ

ԸՆԿ. ԱԼՊԵՐԹ ԱՃԵՍԵԱՆ
2.3.Գ. Բիւրոյի անդամ

2.3.Գ. ԼԵՍ. 30ամեակ

• Գեղարուեստական Յայտնուիչ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 24 Յունիս 2003, կրկնյակ ժամը 8:00ին. «Յակոբ ՏԵՐ Մելքոնեան» հանդիսարանին մէջ:

ՆԱԽԱՐԱՐ ՍԵՄԱՀԱ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ՏԵՍԱԿՑԵՑԱԿ ՍՈՒՐԻԱՑԻ ԻՐ ՊԱՇՏՕՆԱԿԻՑԻՆ ՀԵՏ

Տեղեկատվության նախարար Միշել Սրմահա երկվ շեշտեց, որ փեղեկատվությունը ցոյց կու փայ շրջանի բնակչության կեցուածքը, յարկադէտ լիբանանեան եւ սուրիական կեցուածքները, որոնք առնչուած են շրջանին մէջ լիբանանցի եւ սուրիացի ժողովուրդներուն շահերուն եւ յարաբերութիւններուն:

Սրմահա ընդգծեց Լիբանան - Սուրիա գործակցութիւնն ու յարաբերութիւնը ամբարադէտ ու անհրաժեշտութիւնը: Ան աւելցուց, որ արաբական աշխարհին կը դակախ միասնականութիւնը՝ իրականացնելու համար արդար եւ ամբողջական խաղաղութիւնը:

Սրմահա այս յայտարարութիւնները կարարեց Դամասկոսի մէջ, սուրիացի իր դաշտօնակիցին՝ Ապրան Օմրանի հետ ունեցած հանդիպումին ընթացքին:

Իր կարգին, Օմրան դահանցեց արաբական փեղեկատվական միացեալ կեցուածք՝ դաշտօնակիցներուն համար արաբական շահերը եւ ազատագրելու բռնագրաւուած հողերը:

ՄԱՀԱԶԴ

Ծ. Վ. Անուշահան Դանիէլեան
Տիկին Ժանէթ Դանիէլեան եւ զաւակները՝ Կարօ եւ Անի Տէր եւ տիկին Պետիկ Բէրսօսեան
Տէր եւ տիկին Երուանդ Դանիէլեան եւ զաւակունք
Տիկին Նուրիճա Դանիէլեան
Տիար Զօհրապ Դանիէլեան (Զոնդիկ)
Տէր եւ տիկին Յովհաննէս Դանիէլեան
Գագանճեան ընտանիք
Բարսեղեան ընտանիք
Մուրատիկեան ընտանիք
Սէօքիճեան ընտանիք
Նէսիմեան ընտանիք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց զարմիկին, ամուսնոյն, չօր, եղբօր, տագրոջ եւ Հարազատին՝

ԴԱՆԻԷԼ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ (ՕՃեալ՝ Պէյրութ, 1934Իճ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ 22 Յունիս 2003ին, Ժահթէուի հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 23 Յունիսին, Ս. Սարգիս եկեղեցու մէջ, ժամը 3:00ին, ուրկէ Հանդուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Սերկայս ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Արագած:

ՇԻՄՍԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱԿ ՐԱՖԷԷ ԱՍԱՏԻ ՄԱՐՈՒԱՆ Գ. ՏԱՐԵԼԻՑԸ

Թրիփոլիի եւ Քուրայի մէջ երկու տարբեր հանդիսութիւններու ընթացքին նշուեցաւ Սուրիոյ հանգուցեալ նախագահ Հաֆէզ Ասատի մահուան 3րդ տարեիցը:

Հանդիսութեան ընթացքին արտասանուած խօսքերուն մէջ շեշտուեցան Իսրայէլի դիմադրելու անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ ներքին բանավէճերէ եւ յարուածութենէ հեռու մնալու կարեւորութիւնը, հետապնդելով միայն երկրին գերագոյն շահերը:

Թրիփոլիի մէջ Պասս Կուսակցութեան կազմակերպած ձեռնարկին խօսք առաւ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ, որ շեշտեց, թէ պէտք է ամբարադէտ ներքին միասնականութիւնը եւ ապա շրջանին ապահովել արդար եւ ամբողջական խաղաղութիւն՝ համաարաբական միացեալ կեցուածք ցուցաբերելով Իսրայէլի դէմ:

Խօսք առաւ նաեւ կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Սամիր Տարր, որ շեշտեց, թէ պէտք է Սուրիոյ հետ գործակցութիւնը փուշ տեսնել, այլ՝ վերջ դնել կարգ մը անձնական սկզբունքներու:

Խօսք առին նաեւ երեսփոխաններ Նասեր Քընտի, Ժիհատ Սամատ եւ նախկին նախարար Նապիի Պայտուն, որ փոխանցեց Պասս Կուսակցութեան խօսքը:

Միւս կողմէ, նախագահ Կոր. Էմիլ Լահուտի հովանաւորութեամբ, Քուրայի մէջ տեղի ունեցաւ յիշատակի հանդիսութիւն մը՝ շէյխ Խալիլ Հիւսէյնի մահուան Ա. տարեիցին առիթով: Նախագահ Լահուտի ներկայացուցիչ նախարար Նեժմիա Միքաթի շեշտեց անհատական բանավէճերուն վերջ դնելու եւ երկիրը բարգաւաճեցնելու անհրաժեշտութիւնը:

Խօսք առին նաեւ շէյխ Սոհամէտ Աուուատ՝ իբրեւ ներկայացուցիչ շիրներու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միւֆթի շէյխ Ապտէլ Էմիր Քապայանի, հանրապետութեան միւֆթի շէյխ Սոհամէտ Ռաշիտ Քապայանի ներկայացուցիչ շէյխ Թահա Սապունճի, ինչպէս նաեւ Տրանսիս Պայսարի եպիսկոպոսը՝ իբրեւ ներկայացուցիչ մարոնիներու Նասրալլա Սֆէյր պատրիարքին:

Իր կարգին, խորհրդարանի նախագահ Նապիի Պըրրիի ներկայացուցիչ երեսփոխան Ալի Պապի շեշտեց, որ Լիբանանի մէջ ոչ մէկուն պէտք է արտօնելի ըլլայ երկրին շահերն ու բարգաւաճուելը փոխանգի ենթակելու փորձերը:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՈՒՇԵՐ...

Շարունակուած Ա. էջԷԳ

րայէլեան ուժերը «յաջող գործողութեան» համար: Շարուն ըսաւ, որ այսպիսի գործողութիւններ պիտի շարունակուին, եթէ պաղեստինեան կառավարութիւնը չկարենայ սանձել ծայրայեղականները, որոնք Իսրայէլի դէմ յարձակումներ կը գործեն: Շարուն դիտել տուաւ նաեւ, որ Շարաֆ գիշերուան գործողութիւնը տեղի ունեցած էր իսրայէլացիներու ապահովութիւնը երաշխաւորելու համար:


Միւս կողմէ, Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմէտ Մահերը քննադատեց Իսրայէլը եւ պայս ամբաստանեց իր եւ պաղեստինեան ապահովութիւնը վտանգելու յանցանքով: Մահերը աւելցուց, որ Իսրայէլ իրահրիչ միջոցառումներ կ'որդեգրէ պաղեստինցիներուն դէմ:

Միւս կողմէ, Իսրայէլի արտաքին գործոց նախարար Միլվան Շարուն յայտարարեց, որ պաղեստինցիներու եւ Իսրայէլի միջեւ համաձայնութիւն մը չուտով

պիտի իրականանայ եւ թէ Իսրայէլ պատրաստ է ուժերը հեռացնելու Կապային եւ Բեթղեհէմէն:

Շարուն, որ կը խօսէր Յորդանանի մէջ, ուր կայացած էր Տնտեսութեան Համաշխարհային Ֆորումը, շեշտեց, որ Իսրայէլ պատրաստ է պարպելու Կապան եւ Բեթղեհէմը, պայմանաւ որ պաղեստինցիները որոշեն, թէ կ'ուզեն շրջանները իրենց հակաշիրին ու պատասխանատուութեան ենթարկել: Շարուն դիտել տուաւ նաեւ, որ պաղեստինցիները պէտք է վերջ տան ահաբեկչութեան եւ վայրագութեան:

• ՇԱՆՈՒՄ երէկ յայտարարեց, որ տնտեսա-



Զաւուսաճ

կան Ֆորումի առիթով՝ հանդիպում ունեցած է Պահրէյնի գահաժառանգ իշխան շէյխ Սալման պըն Համատ Խալիֆայի հետ: Շարուն չըսաւ, սակայն, թէ ինչ հարցերու մասին խօսած է իշխանին հետ:

ՄԱՀԱԶԴ

ԼՕՍԻ «Հայաշէն» մասնաճիւղի վարչութիւնը կը գուժէ իր շրջանի վատակաւոր ընկերուիներէն՝

ԱԼԻՍ ՉՐԹԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 19 Յունիս 2003ին:

ԿՈՒՉՈՒԻՆ

• Դեղագործներ, ինքընթով եւ հեռաձայնով աշխատողներ, եւ ծախողներ՝ 20ԵՃ 50 տարեկան: Դիմել՝ հեռ. 03 - 432615:

«ՎԱՆԱՅ ՁԱՅՆ»Ի ԱՅՍՏՈՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- Ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- Ժամը 8:45 «Աստղեր»
- Ժամը 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- Ժամը 12:00 «Խոհեր եւ մտածումներ» Ճահանդուխտ
- Ժամը 3:00 Արաբերէն յայտագիր. հարցազրոյց երգիչ Թոնի Գիուանի հետ՝ իր նոր ալպոմին մասին
- Ժամը 6:00 «Շայ երգաշխարհ»
- Ժամը 8:00 «Պատասխան եւ շաէ»

ՆԱԽԱԳԱՅ ԼԱՅՈՒՏ ՎԵՐԱԴԱՐՉԱԿ ՊՈՒԼԿԱՐԻԱՅԷՆ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ երեկոյեան վերադարձաւ Պէյրութ, աւարտելով Պուլկարիա եւ Եթովպիա պաշտօնական այցելութիւնը, որուն ընթացքին հանդիպումներ ունեցաւ Պուլկարիոյ նախագահ ձեռնարկ Փարվանովի եւ բարձրատիճան այլ պատասխանատուներու հետ:

Հանդիպումին ընթացքին, նախագահներ Լահուտ եւ Փարվանով քննարկեցին Լիբանան - Պուլկարիա երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջանային եւ միջազգային իրադարձութիւնները:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ քննարկումները եղած են շինիչ եւ ընթացած՝ դրական մթնոլորտի մէջ: Նախագահ Լահուտ յայտնեց, որ նախագահ Փարվանովի հետ բաժնած են նոյնանման կարծիքներ եւ կեցուածքներ՝ շրջանային թէ միջազգային հարցերու նկատմամբ:

Հանդիպումին, արժեւորուած են նաեւ լիբանանեպուլկարական երկկողմանի յարաբերութիւնները եւ շեշտուած պանոք ամբարադէտ անհրաժեշտութիւնը, յատկապէս առեւտուրի եւ առողջապահութեան մարկեթին ներս:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ նախանցեալ գիշեր երկրորդ հանդիպում մը ունեցաւ նախագահ Փարվանովի հետ, ներկայութեամբ փոխվարչապետ Իսամ Ֆարէսի: Քննարկումի առարկայ դարձան Իրաքի իրադարձութիւնները, ինչպէս նաեւ Պէյրութ - Սոֆիա տնտեսական յարաբերութիւններու բարելաւումը:

Ի պատիւ նախագահ Լահուտի, նախագահ Փարվանով սարքեց ընթրիք մը՝ Վառնայի մէջ: Ներկայ գտնուեցան Լիբանանի առաջին տիկին Անտրէ Լահուտ, փոխվարչապետ Իսամ Ֆարէս եւ Պուլկարիոյ մէջ Լիբանանի դեսպան Մըլիքէմ Մըսթոն:

Մըսթոն անդրադառնալով Պուլկարիա այցելութեան արդիւնքներուն, ըսաւ, որ անիկա ձեւով մը ամբարադէտ երկու երկիրներուն յարաբերութիւնները եւ իմ մը դրաւ որոշ մարկետը բարգաւաճման նպատակով փոխ գործակցութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գահիրէի Ազգային Առաջնորդարանը իր Ազգային վարժարաններէն մէկուն համար կարիքը ունի հայերէն լեզուի աւագ ուսուցիչ մը, երկրորդական

բաժնի վերի երեք կարգերուն հայոց լեզու եւ պատմութիւն դասաւանդելու եւ վարժարանին մնացեալ կարգերուն մէջ հայերէն լեզուին դասաւանդման գործընթացին հետեւելու համար:

Կակնկալուի, որ թեկնածուները ունենան 12 - 20 տարուան հայերէն ուսուցման փորձառութիւն, իսկ իրենց տարիքը ըլլայ 40 տարեկան եւ վեր: Թեկնածուներուն թոշակը պիտի որոշուի ըստ պարագայի եւ փորձառութեան:

Դիմումները կարելի է դրկել առաւելագոյնը մինչեւ 15 Յուլիս 2003, հետեւեալ հասցեներէն մտկուցելու:

E-mail: armpategy@yahoo.com
Fax: (202) 5906671
Փոստի հասցէ.- 179 Ramses Street
P. O. Box 48 Faggala
Postal Code 11271 Daher,
CAIRO - EGYPT

ԴԻՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

This summer,
you will fall in love with our outdoor furniture

GALERIE VANLIAN
A WORLD OF OUTDOORS

Dora Highway
Tel: 01 241951

HAMAZKAYIN FORUM 2003

Գրքի Ուսանողական մշակութային հաւաք շարժումի մէջ

Պատրաստ էք ամառուայ արձակուրդի ձեր ծրագիրը մշակելու

Մասնակցեցէք Համազգայինի Ուսանողական մշակութային հաւաքին՝ երկու շաբաթ փետրոսյաբեամբ

Մասնակցութեան տարիք՝ 17-էն 25 տարեկան
Յուլիս 10 - Յուլիս 24
ՅԱՅՏԱՍԱՆ

Այս հաւաքը առիթը պիտի ընծայէ՝

- * Ծանօթանալու հայ մշակոյթի պատմութեան եւ ամառուայիններուն:
- * Հանդիպելու սփիւրջահայ թէ հայրենի երիտասարդ ուսանողներու:
- * Մասնակցելու այժմեական կարգեր արժարձող դասախօսութիւններու, մատուցուած ծանօթ հայ մտաւորականներու եւ մասնագէտներու կողմէ:
- * Զրուցելու եւ միտքեր փոխանակելու հայ երիտասարդութիւնը հետաքրքրող բազմաթիւ հարցերու մասին:
- * Այցելելու հայկական պատմական կեդրոններ՝ ինչպէս օրինակ թանգարաններ, եկեղեցիներ եւ այլ տեսարժան վայրեր:
- * Կայելու տեղույն մշակութային, երաժշտական թէ թատերական կեանքը:
- * Կազմակերպելու մասնակցողներուն իսկ կողմէ՝ եզրափակիչ անմոռանալի հանդէս-հաւաքոյթ մը, վերապրելու միասին անցուցած յիշատակելի երկու շաբաթները հայրենի հողին վրայ:

Մանրամասնութեան համար կրնաք դիմել Համազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ, Նշան Փայլանեան Ծնարան, հեռաչայն 01- 372455 կամ 03-549917.
ամէն օր մուտքեան ժամը 10:00էն մինչեւ կ.է. 4:00
կամ այցելել մեր կայքը՝ www.hamazkayin.com

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՐՑԱԶԵՐՈՅՑ ԹԱԹՈՒՒՆ ԱՈՆԵՆՑ - ՓԱՓԱԶԵԱՆՆԻ ՀՆՏ

Հայկական Ցեղասպանության հանդեպ իր պատասխանատուությունները հետազոտող հետազոտողական ու բազմակողմանի արշավը ընթացքի է...

Այս հրավերը կը ներկայացնայ այնպիսի պահանջներ, երբ Թուրքիոյ կրթական նախարարութիւնը կրթական հոգի տանող մը կը հրապարակէ...

Հայաստանի եւ Սփյուռքի ուղղութեամբ թրքական կառավարութեան կողմէ ցուցաբերուած որոշումը լուրջ մտնեցում կը կրճատէ...

Այս վերջին անակնկալ յարձակումը ոչ-այնքան ցանկացած փորձ մըն է ամերիկեան եւ եւրոպական քաղաքական շրջանակներուն ցոյց տալու...

Սփյուռքի հայրենակիցներ, հիմնական է, որ արտուրու մնանք եւ բոլոր ըստ անդրադառնանք, որ այս կեղծ ճիշդ կը միտի միայն հարուստը...

ՄԱՅՏԵԱԼ ՆԱԿԱԳՆԵՐՈՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾՐԱՋԵՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՓԱՐԻԶԻ ՓՈՂՈՑՆԵՐԷՆ ՍԷԿԸ ՊԻՏԻ ԿՈՉՈՒԻ ԾԱԽԱՐԵ ՄԻՍԱՔԵԱՆՆԻ ԱՆՈՒՆՈՎ

Վերջերս, Փարիզի Գրդ թաղամասի քաղաքապետարանին մէջ, Փարիզի Հայ մշակոյթի տան համագործակցութեամբ կազմակերպուած են Հայ մշակոյթի օրերը...

Փարիզի Գրդ թաղամասի այն վայրն է, ուր ապաստան գտած են Եղեռնէն ճողողած եւ Ֆրանսայի մայրաքաղաքը հասած առաջին գաղթականները...

Հայ մշակոյթի նուիրուած օրերուն բացումը կատարելով Գրդ թաղամասին քաղաքապետ ժաք Պրաւօ Նշած է Հայերու վաղեմի ներկայութիւնը Փարիզի այս թաղամասին մէջ...

Հայ մշակոյթի մաս կը կազմէ Գրդ թաղամասին եւ ընդհանրապէս ամբողջ Փարիզի մշակոյթին, ըսած է քաղաքապետը, որ մտադիր է Հայ մշակոյթի օրերը քարտէս տարեկան ձեւադրել: Միասնական քաղաքապետը խոստացած է Գրդ թաղամասի փողոցներէն մէկը կոչել «Յաւաջ»ի հիմնադիր եւ վաստակաշատ խմբագրապետ Շաւարշ Միսաքեանի անունով:

Վ. Տ.- Անուանակոչումներու հարցը բնական խնդրոյ առարկայ դարձած է յիսնամեակի ու վաթսուամեակի տարիներուն:

Թ. Ս. Փ.- Յաճախ, մեր շխտատանքներու ժամանակ անդրադարձած ենք այդ հարցին, առանց սակայն անմիջական խնդիր դարձնելու: Այն գրուած թիւները որոնք մեր ձեռքին կ'անցնէին կը սրբագրուէին միայն «Արեւմտահայաստան» ու «Արեւմտահայոթիւն» անունները գործածելով: Այս առիթով յիշեցրէ որ, հիմնուած վստահելի տուեալներու վրայ, շուրջ մէկ միլիոն Հայեր կ'ապրին այսօր Արեւմտահայաստանի տարածքին՝ ասորիներու եւ քիւրդներու ըստ Անգարայի «Լեռնային թուրքերու»... կողքին, հայալեռնաբնի չենթարկուելու համար քրտական անուն ու կենցաղ իւրատրուցած: Աստուծոյ մէջ, ըստ երեւոյթի, տակաւին կան լեռնաբնակ բազմանդամ ընտանիքներ՝ որոնք պահած են իրենց լեզուն եւ հաւանդութիւնները, հաւատարմութիւնները որ իրենց ազգագրական օրը պիտի չուշանայ: Եթէ այս մնացորդացը պիտի փրկուի ամբողջական ու ծագումէ՛ Հայ Դատի աշխատանքներուն մէջ պէտք է մտնէ նաեւ մեր այս հայրենակիցներուն մարդկային իրաւունքներու հարցը՝ հիմնուած ՄԱԿի նոյնանուն հռչակագրին, միջազգային օրէնքներու եւ, նոյնիմիջ թուրք հանրատուութեան ստորագրած Լոզանի դաշնագրի փոքրամասնութեանց անկապտելի իրաւունքներուն հետ առնչուող բազմաթիւ յօդուածներուն վրայ:

Վ. Տ.- Ի՞նչ է, կը կարծեք, այս հարցի միջնէն օրս անտեսման պատճառը:

Թ. Ս. Փ.- Նոյն այդ հարցումին ամենազարմանալի պատասխանը որ ստացած եմ հետեւեալն է. «Հարկ է զգուշ շարժիլ, որպէսզի այդ ժողովուրդը պատանդ չդառնայ թուրք պետութեան ձեռքը...»: Ինչ կը թուի թէ, Եղեռնէն ստացուած լախտի հարածէն աւելի քան 80 տարի ետք, հոգեբանականօրէն, ինչ ինչ բարդոյթներու պատրաստ չենք վերադառնալու այդ հարկուող ոճի ինչպէս կ'արեւելու համար իրականութիւնները այնպէս ինչպէս որ կան...

Վաթսուանական ու եօթնասունական թուականներուն, Միացեալ Ազգերու Նիւ Եորքի համալիրին մէջ սքանչելի կապ մը ունէինք: Լեւոն Քէշիշեան անունով: Լեւոնը Միջին Արեւելքի արարական մամուլի ծանօթ թղթակիցներէն էր միաժամանակ ըլլալով Հայ Դատի ամենահաւատարմորէններէն: Լեւոնն ալ անոնցմէ էր որոնք մտահոգ էին «քրտացած հայերու» ճակատագրով, ու պահանջներու միջոցով կը ջանար այդ հարցը արծարծել ՄԱԿի մօտ ներկայացուցչութիւններու իրեն ծանօթ պաշտօնատարներու հետ:

Վ. Տ.- Նման կապեր արդեօք կը պահուի՞նք այսօր եւս:

Թ. Ս. Փ.- Անձնական կապեր անշուշտ գոյութիւն ունին, Ուաշինկթընի մէջ, մեծաւ մասամբ Մերակոյտի ու Ներկայացուցչական Տան անդամներու հետ, որոնք այսօր, որպէս արհեստավարժ քաղաքական մարդիկ՝ չունին այն մտաւորական ու բարոյական հեղինակութիւնը որ անցեալին պետական մարդիկ կը վայելէին: Ներկայիս, ամերիկացի հասարակութիւնը մեծ հաւատք չունի «փոխիթիւն»ներու խօսքին՝ նկատելով գանձեր չհազարտական միտումներով եղած արտայայտութիւնները: Սկզբունքային հարցեր դադրած են գոյութիւն ունենալէ քաղքին, մեծ ու փոքր շահարկութիւններու միջիններով ընտրուած «քաղաքագէտներ» գիրքը կը հրմըտակեն տեղ մը գրաւելու համար գաղափարախօսական «ձախի» ու «աջի» միջեւ անշարժացած «կեղծութիւն» շրջափոխներս... Քուէարկու քաղաքացիները հետզհետէ կը գրաւէն ունեւոր բաժնետէջը որուն շահերը, ընդհանրապէս չեն համընկնիր աշխատաւոր մեծամասնութեան շահերուն: Այս պայմաններուն տակ, ակներեւ է ժողովրդավար կարգերու անփառունակ հանաքը: Արշադր դէպի տնտեսական ու մշակութային «երկրագնդացում»... կլորտալիզմը այսօր լրջօրէն կը սպառնայ ազգ-պետութեան գոյատեւման ու ազատ գարգացման: Այս պայմաններուն տակ, նիւթապաշտու վրայ բարձրացող միջազգային դրամատիքը մեծ է ան սպառնացող առաջնահերթ վտանգը կը նկատուի ազգային գաղափարախօսութիւնը ու անոր հովանիին տակ աճող մշակոյթներու այլազանութիւնը:

Վ. Տ.- Ի՞նչ է անցեալի պատգամը՝ որուն վրայ հիմնուելով, Հայ Դատի զինուորակազմը կրնան իրենց գործունէութեամբ ընթացեալը: Թ. Ս. Փ.- 1965ի քաղաքական վերադարձումը ազգի մը, որուն ծուխները կ'իսամեռ լքուած էին Սուրիոյ անապատներուն մէջ, նախասահմանուած էր: Պէտք է երթալ 50 տարի ետ ու յսել ոճրապարտ ուղեղի մը թայլած փաթիլ լիտի հաստատումը՝ թէ յայնպիսի հարուած մը պիտի տար Հայ ժողովուրդին, որ 50 տարի անոնք չկարենային գրուի բարձրացնել... Եւ այդպէս ալ եղաւ: Յիսունամեակին ու անոր յաջորդող տասնամեակներու մեր նկրտումներուն արդիւնքը եղող սպորտաւ... եւ վաղուան... իրականութիւնը մէրն է, մեր քրտիներէն, մեր արեան, մեր յաջողութիւններուն ու մեր ձախարհութիւններուն պատասխանատուութիւնը ստանձնած մեր ժողովուրդին է, որ ընտրեք է ազատութեան ու անկախութեան քաղաքացիները եւ սորոշեք է գայն, իր մտքի ու բազկի ուժով, լայն ու ապահով ճանապարհի վերածել... Վ. Տ.- Ի՞նչ աւանդուած է մեր սերունդը որ այսօր կարելի է ժամանակակիցութիւնը կ'սկստել:

Թ. Ս. Փ.- Իմս յետ-Եղեռնի առաջին սերունդն է, ծնած օտար երկրներու տակ, Սփյուռքի կազմաւորման շրջանին: Թէեւ արեւմտացած կամ արեւմտեան դպրոցներու մէջ դաստիարակուած, իմ սերունդիս մեծամասնութիւնը, ծնողական յարկի տակ իւրացուած հայեցիութեամբ՝ պատուաստուած էր օտարացման մշտական ախտին դէմ: Արեւմուտքի «ազատական» գաղափարները, մասնաւորաբար Միացեալ Նահանգներուն մէջ, կը միտին շփոթ մը ստեղծելու ազգայնականութեան ու ազգայնամոլութեան սահմանումներուն միջեւ՝ յանձնառուութեամբ միջնէն ցեղապաշտութեան դաշնակցութեամբ: «Միջազգայնականութիւն» քարոզելով, անոնք, գարմանալիօրէն, ազգութիւններու ընտրով չի յատկանիչները, որոնք բոլոր քաղաքակրթութիւններու մարդաբանական են եղած, ու ջանան անհասկանալիութեան լեզուով կ'արագային հասարակութիւնը՝ ուր այլեւս ազգութիւնները չկան բայց կայ համայնակուցումը... «միջազգայնական» ազատ շուկայ մը՝ ուր անգոյ «ազգերու» տեղը բռնած բարեկրօնացած «անկախ» պետութիւնները ամեն մարդուօր ու սեփականաշնորհեալ ընտանեկան հարստութիւններու շահարկողութեան լեզուով են գրադած:

Վ. Տ.- Ըստ երեւոյթի, Հայ Դատի գործունէութեան զաշուր փոփոխութիւններու է եմքարկը:

Թ. Ս. Փ.- Բնական է որ պատմութեան հոլովոյթին ու սեփականաշնորհեալ համընթաց, նոր միջոցներու հետ միասին, նոր տարբեր ձեւեր մէջ տեղ գան: Քաղաքական «ակտիվիզմ» լծուած ուժերը, Վ. Տ.- Ըստ երեւոյթի, Հայ Դատի գործունէութեան զաշուր փոփոխութիւններու է եմքարկը:

Թ. Ս. Փ.- Իմ սերունդն է, որ պատմութեան հոլովոյթին ու սեփականաշնորհեալ ընտանեկան հարստութիւններու շահարկողութեան լեզուով են գրադած: Իմ սերունդն է, որ անփառունակ հարգարու-

ինչպիսին են Հայ Դատի յանձնախումբերը, պէտք է ճանչնան օրուան պայմաններն ու պահանջները եւ այդ ուղղութեամբ ընտրեն իրենց գործելաձեւը, եթէ կ'ուզեն իրենց շխտատանքներուն արդիւնաւորութեանը:

Վ. Տ.- Կարելի՞ է օրինակներով խօսիլ: Թ. Ս. Փ.- Օրինակի համար, այն խոր համոզումը թէ հայու ինքնութիւնը, իր իւրայատուկ լեզուով ու մշակոյթով, հարկ էր ո'չ միայն պահել՝ այլ ապահովել՝ անոր յատուկ տեղը արեւուն տակ, թոյլ չտալով որ ան խամրի ու դադրի չնչնէ գրադարաններու եւ թանգարաններու մէջ: «Հայապահպանումը», առանց վերանորոգման ու յառաջդիմութեան, առանց շփուելու աշխարհի այլ մշակոյթներու հետ, կրնայ առաջնորդել միայն լճացման ու ստեղծագործական թափկանացման: Իմ սերունդը հաւատացած էր թէ հայ մշակոյթը, իր հարուստ անցեալով, կարող է մտնել արդիականացման ճանապարհը: Իմ սերունդը հազարամեայ ինքնութիւնը աղաւաղելու կամ վտանգելու, մրցելով լատիներէնի հետ իսկ: Նոյն ատեն, այս նոյն սերունդն էր որ, Դաշնակցութեան հաւատարմ հանգանակին հաւատարիմ, հաւատաց ընկերային արդարութեան լայնորէնականին՝ այն խոր համոզումով՝ թէ ոչ մէկ հաւաքականութիւն, ոչ մէկ ժողովուրդ կամ ազգ կարող է (Մար. 3 եւ վերջ)

ապահով ու հանգիստ ապրելու ու գոյատեւելու՝ անտարբեր մնալով շրջակայ մարդկային ու ազգային հիմնական արժեքներու: Այդ սկզբունքներն ու արժեքները նոյնքան իմաստալից ու անհրաժեշտ են այսօր որքան էին անցեալին. հարկ է պանոնք պահել ու փոխանցել գաղթ սերունդներուն եթէ կ'ուզենք պահպանել մեր ինքնութիւնը՝ սփուռեան ժամանակներու միջոցով:

Վ. Տ.- Կարելի՞ է օրինակներով խօսիլ: Թ. Ս. Փ.- Օրինակի համար, այն խոր համոզումը թէ հայու ինքնութիւնը, իր իւրայատուկ լեզուով ու մշակոյթով, հարկ էր ո'չ միայն պահել՝ այլ ապահովել՝ անոր յատուկ տեղը արեւուն տակ, թոյլ չտալով որ ան խամրի ու դադրի չնչնէ գրադարաններու եւ թանգարաններու մէջ: «Հայապահպանումը», առանց վերանորոգման ու յառաջդիմութեան, առանց շփուելու աշխարհի այլ մշակոյթներու հետ, կրնայ առաջնորդել միայն լճացման ու ստեղծագործական թափկանացման: Իմ սերունդը հաւատացած էր թէ հայ մշակոյթը, իր հարուստ անցեալով, կարող է մտնել արդիականացման ճանապարհը: Իմ սերունդը հազարամեայ ինքնութիւնը աղաւաղելու կամ վտանգելու, մրցելով լատիներէնի հետ իսկ: Նոյն ատեն, այս նոյն սերունդն էր որ, Դաշնակցութեան հաւատարմ հանգանակին հաւատարիմ, հաւատաց ընկերային արդարութեան լայնորէնականին՝ այն խոր համոզումով՝ թէ ոչ մէկ հաւաքականութիւն, ոչ մէկ ժողովուրդ կամ ազգ կարող է

ապահով ու հանգիստ ապրելու ու գոյատեւելու՝ անտարբեր մնալով շրջակայ մարդկային ու ազգային հիմնական արժեքներու: Այդ սկզբունքներն ու արժեքները նոյնքան իմաստալից ու անհրաժեշտ են այսօր որքան էին անցեալին. հարկ է պանոնք պահել ու փոխանցել գաղթ սերունդներուն եթէ կ'ուզենք պահպանել մեր ինքնութիւնը՝ սփուռեան ժամանակներու միջոցով:

Վ. Տ.- Կարելի՞ է օրինակներով խօսիլ: Թ. Ս. Փ.- Օրինակի համար, այն խոր համոզումը թէ հայու ինքնութիւնը, իր իւրայատուկ լեզուով ու մշակոյթով, հարկ էր ո'չ միայն պահել՝ այլ ապահովել՝ անոր յատուկ տեղը արեւուն տակ, թոյլ չտալով որ ան խամրի ու դադրի չնչնէ գրադարաններու եւ թանգարաններու մէջ: «Հայապահպանումը», առանց վերանորոգման ու յառաջդիմութեան, առանց շփուելու աշխարհի այլ մշակոյթներու հետ, կրնայ առաջնորդել միայն լճացման ու ստեղծագործական թափկանացման: Իմ սերունդը հաւատացած էր թէ հայ մշակոյթը, իր հարուստ անցեալով, կարող է մտնել արդիականացման ճանապարհը: Իմ սերունդը հազարամեայ ինքնութիւնը աղաւաղելու կամ վտանգելու, մրցելով լատիներէնի հետ իսկ: Նոյն ատեն, այս նոյն սերունդն էր որ, Դաշնակցութեան հաւատարմ հանգանակին հաւատարիմ, հաւատաց ընկերային արդարութեան լայնորէնականին՝ այն խոր համոզումով՝ թէ ոչ մէկ հաւաքականութիւն, ոչ մէկ ժողովուրդ կամ ազգ կարող է

ապահով ու հանգիստ ապրելու ու գոյատեւելու՝ անտարբեր մնալով շրջակայ մարդկային ու ազգային հիմնական արժեքներու: Այդ սկզբունքներն ու արժեքները նոյնքան իմաստալից ու անհրաժեշտ են այսօր որքան էին անցեալին. հարկ է պանոնք պահել ու փոխանցել գաղթ սերունդներուն եթէ կ'ուզենք պահպանել մեր ինքնութիւնը՝ սփուռեան ժամանակներու միջոցով:

Վ. Տ.- Կարելի՞ է օրինակներով խօսիլ: Թ. Ս. Փ.- Օրինակի համար, այն խոր համոզումը թէ հայու ինքնութիւնը, իր իւրայատուկ լեզուով ու մշակոյթով, հարկ էր ո'չ միայն պահել՝ այլ ապահովել՝ անոր յատուկ տեղը արեւուն տակ, թոյլ չտալով որ ան խամրի ու դադրի չնչնէ գրադարաններու եւ թանգարաններու մէջ: «Հայապահպանումը», առանց վերանորոգման ու յառաջդիմութեան, առանց շփուելու աշխարհի այլ մշակոյթներու հետ, կրնայ առաջնորդել միայն լճացման ու ստեղծագործական թափկանացման: Իմ սերունդը հաւատացած էր թէ հայ մշակոյթը, իր հարուստ անցեալով, կարող է մտնել արդիականացման ճանապարհը: Իմ սերունդը հազարամեայ ինքնութիւնը աղաւաղելու կամ վտանգելու, մրցելով լատիներէնի հետ իսկ: Նոյն ատեն, այս նոյն սերունդն էր որ, Դաշնակցութեան հաւատարմ հանգանակին հաւատարիմ, հաւատաց ընկերային արդարութեան լայնորէնականին՝ այն խոր համոզումով՝ թէ ոչ մէկ հաւաքականութիւն, ոչ մէկ ժողովուրդ կամ ազգ կարող է


Advertisement for AFHIL medical equipment. Includes text: 'RENT AND SALE', 'AT HOME Wheelchair, Walker, Electric Bed, Manual Bed, Water Mattress, Cans, Sticks, Serum Tripod, Walking Frame', 'HOME MEDICAL EQUIPMENT SERVICES', 'Over Bed Table, All Kinds Of Oxygen We Also Provide, Laboratory service, Physiotherapist, Nurses Aids, P.T.S. (AMBULANCE)', 'NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.', 'ՅՈՒՅԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁՐՈՐ ԳՐԱՍԵՆԿԱԿ՝ ԱՅՏՐԼ, ԱՅՏՏԻ ԾԵԼԵ, Բ. ՅԱՐՇԵՆ (01) 242556/7'.

Մշակութային Էջ

«ԾԻԼ ԲՈՒՍԱՅ»

(ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵԴՐՈՆ)


Կիրակի, 8 Յունիսի կէսօրէ ետք ժամը 3:00ին տեղի ունեցաւ բացումը իր տեսակին մէջ իւրօրինակ գեղանկարչական ցուցահանդէսի մը, Երեւանի Ժողովրդական արուեստներու թանգարանի ցուցասրահներուն մէջ:



«Նախնիներուն պարը», գործ՝ Հայկ Յարութիւնեանի

Հատանք անոնց ունակութիւններու բացայտման մասին: Ան հետեւեալ ձեւով կը բացատրէ երեխայի հոլիւտներն ու ստեղծագործական կարողականները: «Ամէն մի երեխայ չբացայտուած հրաշք է, աստուածային երազանքներով ու ներշնչմամբ ի մի աշխարհ: Նա ապրում է կենարար այն քանդակի մէջ... Այս բոլորէն ետք տիկին Մարտիրոսեանը մեծ հաւատք ունի նաեւ երեխաներու ստեղծագործական անհատականութեան մասին: Ան կ'ըսէ: «Երեխան ուժեղ է, ինքնավստահ, սովորում է վերապրել եւ մտահայել՝ կրկին ու կրկին արարելու համար: Դա օգնում է նրան յաղթահարել ներքին հակասութիւնները եւ դառնալ իր հնարաւորութիւնների սահմաններում նախաձեռնող, ներամբողջական անհատ»:

Իսկ եթէ հարց տաք տիկին Մարտիրոսեանին, թէ ո՞րն է իր մեթոտին հիմնաքարը, ան պիտի պատասխանէ:



«Մոցաբը», գործ՝ Լորա Պետրոսեանի

Նախ պարզեցինք, թէ «Ծիլ Բուսաց» երեխաներու ներդաշնակ գարգացման կեդրոնը արդէն իսկ իր ուրոյն ու բարձրորակ ստեղծագործութիւններով ծանօթ է Հատերու: Կեդրոնը (որուն հիմնադիրն ու ղեկավարը երաժշտագէտ ու դաշնակահարուհի Արմենուհի Մարտիրոսեանն է), ունի ուրոյն կառուցուածք, իւրապատուկ գործելաձեւ ու

ազդակների սրտատրոփ սպասումով, որոնք կ'արթնցնեն նրա մէջ արարման նախաստեղծ ուժը: Բաւական է ճշմարիտ սիրոյ անկեղծ մի խօսք, որ երեխայի նրբագէտ հոգին ընդունալ գնաց բարուն եւ գեղեցիկին: Եւ այս պահերին նա արարիչ է: Նկարում է, երգում, պարում, քանդակում, տարբեր կերպարներ մարմնաւորում: Ներթա-



«Պախ-գունձ՝ Աւե Մարիա», գործ՝ Մարիամ Յովհաննիսեանի

ստեղծագործական բարձր մակարդակ: Յուշագրութեան դրուած հարիւրէ աւելի գեղանկարները իրագործուած են երաժշտական տպաւորութիւններու տակ ու կը կրեն անոնց անուանումները, ինչպէս՝ «Շոտտագովիչ է. սիմֆոնիա», «Շուպերթ՝ Պարգարօլա», «Պախ-Գունձ՝ Աւե Մարիա», «Տեպիլուսի՝ Մով» «Նարեկացի», «Աւետ Տէրտէրեան Գ. սիմֆոնիա», եւ այլն:



«Էգմընտ», գործ՝ Հայկ Յարութիւնեանի

նաստեղծութիւնը՝ երաժշտութիւն է, շարժումն ու ժեսթը ծնուած են երաժշտութիւնից եւ գոյն ունին, իսկ երաժշտութիւնը յայնարժեք քարանուէ փոքր

Ո՞Վ Է ԱՐՄԵՆՈՒՏԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ



«Ծիլ Բուսաց» ներդաշնակ գարգացման կեդրոնի հիմնադիրն ու ղեկավարը երաժշտագէտ եւ դաշնակահարուհի Արմենուհի Մարտիրոսեանն է: Կեդրոնը հիմնադրուել է 1994ին:

Ա. Մարտիրոսեանի 35ամեայ մանկավարժական գործունեութիւնը (Երեւանի եւ Լվովի պետ. կոնսերվատորիաներում, Երեւանի եւ Օմսկի երաժշտական ուսումնարաններում, Երեւանի կիւնոյի եւ թատերական արուեստի պետ. ինստիտուտում եւ այլն.) ալընայալ զարթոյց գեղարուեստ-կերպարային դաստիարակութեան խիստ կարեւորութիւնը մինչեւ 14 տարեկան երեխաների համար, երբ ձեւաւորում են մարդու հոգեկան որակները, գեղեցիկն ու բարոյականը երեխայի աշխարհը կալման մէջ: Այլ շրջանում է. որ առաւել ամբողջական է բացայտում երեխայի ստեղծագործական ներուժը: Արթնացնելով երեւակայութիւնը եւ զգացմունքները կարելի է հասնել ապշեցուցիչ արդիւնքների՝ ազատ ընտրութեան սկզբունքով տարուող ճշմարիտ կերպարային դասաւանդման դէպքում: Ա. Մարտիրոսեանի մեթոտն ապացուցում է, որ արուեստի ճշմարիտ եւ անկեղծ վերապրումը երեխայի մէջ ծնում է ստեղծագործ մի վիճակ, երբ նա «յայտնաբերում» է իր սեփական տեսիկան, որը փոխարինում է մասնագիտական հմտութիւններին: Նման պարագայում ստեղծուած աշխատանքները զարմացնում են մասնագէտներին գեղանկարչութիւն, պլաստիկա, քանդակագործութիւն չուսանած երեխաների ստեղծագործութիւնների ներդաշնակութեան, կոմպոզիցիայի, ժեստի կատարելութեամբ: Նոյն յաջողութեամբ միեւնոյն երեխան նկարում է, քանդակում, խաղում թատրոնում եւ այլն:

«Ծիլ Բուսաց» ստուդիայի սաների աշխատանքները ներկայացուել են Հայաստանում եւ արտասահմանում, այդ թուում Գերմանիայում, Միացեալ Նահանգներում, Թեհրանում, Կիպրոսում, Հալեպում կազմակերպուած ցուցահանդէսներում:

Հետաքրքրութիւն են առաջացնում թատերական ներկայացումները, որտեղ առաջատար դեր է խաղում երաժշտութիւնը եւ որն, ըստ մասնագէտների, «նոր խօսք է մանկական թատերական արուեստում»: Չորս տարիների ընթացքում բեմադրուել են «Եթէ բախտը, Մոցարթը եւ Պեթրովսկին հանդիպէին», «Սուրբ Ծնունդ», «Յոյսի տուն», «Պարսիֆալ», «Ալեքսանտր Մակեդոնացի», «Կախարդական սրինգ», «Նարեկացի» եւ այլ ներկայացումներ:

2000 թ. ամբարը՝ Ա. Մարտիրոսեանը, իսկ 2001 թուին կոնսերվատորիայի նրա շրջանաւարտը՝ Միւնստերի անուան մեթոտով յաջողութեամբ աշխատեցին աւելի քան 150 իրանահայ երեխաների հետ Թեհրանում՝ ապացուցելով, որ մեթոտը չունի աշխարհագրական սահմաններ:

Տարիների ընթացքում բացայտուեց այս մեթոտի մի նոր հայեցակէտը եւս. այն բարեբար ազդեցութիւն է թողնում բարոյութեանը տառապող «ղժուար» երեխաների վրայ:

Այսօր Ա. Մարտիրոսեանի շուրջ կազմուել է համախոհների մի խումբ՝ կազմուած նրա նախնիքն եւ ներկայիս ուսանողներից, որոնք մեծ ոգեւորութեամբ եւ սիրով գրադուում են մատակ սերնդի դաստիարակութեամբ:

«ԱՉԴԱԿ»-ի ՀԵՌԱՋԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱՉԴԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

«Ծիլ Բուսաց» ներդաշնակ գարգացման կեդրոնի սաները, երգի, պարի, դերասանութեան, քանդակագործութեան եւ գեղանկարչութեան կողքին կը զբաղին նաեւ գրականութեամբ: Անոնց յոյգերուն եւ բանաստեղծական ձաշակին մասին որոշ գաղափար մը տալու համար ստորեւ կու տանք բանաստեղծութիւններու շարք մը:

«ՅՈՒՍԱԿԱՏՈՒԹԻՒՆ»
Ինչո՞ւ տենչալ
Եթէ գիտես, որ չես հասնի,
Ինչո՞ւ թոչել,
Եթէ երբէք չես բարձրանալ,
Ինչո՞ւ մարտնչել,
Սոսկ պատուի՞ համար
Սոսկ որ ասես, թէ չի՞ յանձնում:
Ինչի՞ համար է կեանքը,
Ինչի՞ համար տանջանքը,
Ինչո՞ւ պէտք է ապրել
Մաշուել ու յարմարուել
Ճակատագրին այդ դաժան:
Մոլորութեան մէջ միայն
Կառուցել ապագան,
Եւ այդ պատիժը դաժան,
Կրել հանգիստ ու անձայն:

Մնասիման թախիծ է
Իջել աշխարհին
Բոլորն ապրում են ու աշխատում,
Աշխատում անվերջ:
Բայց այդ աշխատանքը
Իրենց չի գեղեցկացնում,
Այլ դարձնում անշունչ ու անպայ,
Դարձնում ինչպէս մի արձան
Քարէ հայեացքով ու
Ու սրտի տեղ՝ ոչինչ
Չեն պզոււ այլեւս սրտերով,
Այլ լոկ ուղեղով,
Լոկ բնապրով ու մտքերով:
ԴԱԻԹԵԱՆ ԱՇԽԵՆ
14 տարեկան

«ՈՒՇ Է...»
Պատահում են կեանքում պահեր,
Երբ չմտածուած ու անկապ խօսքերով՝
Չնշում են միակ հարապատ մարդու:
Այդքան չեք մտածեք պահած-պահպանած
Հաւատն ու երազը քո անձի հանդէպ:
Եւ դժբախտաբար ուշ են հասկանում,
Որ սրտերդ շնչել են նրան՝
Չնշել են յաւէտ:

Ընդունակ եւ արդէն՝ արցունքն աչքերիդ
Նեարդի թրթիռը մի կերպ պահելով,
Ծնկի իջնելով ներում աղերսել
Այդ տանջում ու ծեր ձեռքերն

Մնուր կրծքիդ սեղմելով կրկնել.
«Օ՞, ների՛ր մայրիկ»:
Բայց արդէն ուշ է,
Քանզի կոտրել են նրա սիրտը մաշուած,
Կամ անվերադարձ են արդէն ուշացել՝
Չես տեսնի կրկին նրա
Կնճռուած դէմքը սիրասուն,
Իսկ ամբողջ մարմնով յսում են մի ձայն,
Այրո՞ղ ու խեղդո՞ղ մի աւերիչ ձայն
«Ուշ է սիրելիս»,
«Ուշ է իմ անգին»:
ԲԻԱՅՆԱ ՕՍՆԵԱՆ

14 տարեկան
«ՀԱՅԱՍՏԱՆ»
Հայաստան,
Միակն են այս աշխարհում
Որ ունես Արարտ,
Մի վսեմ ու սիրուն, անուշ ու պայծառ
Միակն են աշխարհում, որ ունես Սեւան,
Պարզ ու զուլալ, վճիտ ու սիրուն:

Հայաստան,
Քանի, քանի հապարամեայ կեանք ունես դու,
Քանի, քանի հապարամեայ գեղեցկութիւն
ունես դու:

Հայաստան,
Որքան զոհեր տուել դու,
Որքան արիւնարբու պատերապմներ են
մղել դու:

Հայաստան,
Որքան տանջանքներ են տեսել դու
Ու ապրում են մինչեւ օրս:

Բայց դու, մի յուսահատուիր,
Յոյսդ մի լքիր,
Չէ որ կը գայ այն օրը,
Երբ դու կը փայլես ու
Ամբողջ աշխարհով կը փառաբանուես:

13 տարեկան
ՇՄԱԻՈՆԵԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
«ԳԻՇԵՐՆ ԻԶԱԿ»

Գիշերն իջաւ եւ մեղմ քամին քայլեց մարգերի վրայով:
Լիճը այիքաւոր ինչպէս վարսեր գանգուր-
աստղերն կարծես ծաղկած ծաղիկներ, ամպերը
քարանալու երջանկութիւն: Ծառերը մեղմ այս
կողմ, այն կողմ, այն կողմ օրօրուելով եւ տերեւ-
ները շշուշուով խօսում էին միմեանց հետ: Այդ
ամէնք տեսնելիս եւ լսելիս մարդու սիրտը թուլա-
նում է, նա սկսում է, մտածել եւ յիշել իր անցած
օրերը տխուր եւ ուրախ, իր արարքները շար եւ
վղջում... Այդ ամէնք այնքան մեղմ եւ քնքուշ է՝
կարծես մայր:

Ծանրորակ մամուլի արտադրություն

ԲԱՑ ՉԵՌԻԵՐ

ԱՄԵՐԻԿԱ ԵՄԵ ԷԼԻԶԱՊԵԹ ԱՍԼԱՆԵԱՆ «ՇՈՂ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ»* ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՏՏ ԸԱՅԱՍՏԱՆ ԵՐԹԱԼՈԿ ԵՒ ԸԱՅԿԱԿԱՆ ԳԻՂԻ ՄԸ ՄԸ ՄԵՋ ԿԵՐԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՃԻՆԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԱԿԳԵԼՈՎ ԿԸ ԿԵՐԱԳՏԵ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ: ԸԱՄԱՑԱՆՑԻ ԿՐԱՅ ԸԱՅԿԱԿԱՆ ԼՈՒԵՐՈՒ «ԿՈՒՒՆԿ»՝ ՑԱՆՑԸ ԸՐԱՊՐԱԿԱԾ Է ԱՆՈՐ ՏՊԱՒՈՐԻՉ ՄԵՎ ՅՕՂՈՒՄԸ: ՍՏՈՐԵՒ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

«Լիբերի», «Լիբերի», «Լիբերի»... տակալին կը լսեմ այդ բարձր եւ իրարմէ տարբեր ձայները, որոնք զիս կը կանչեն: Հայկական թաւ շնչոտաւորում մըն է, թէ պարզապէս «Լիբերի» անունը արտասանելու անկարողութիւնը: Անունս չի հնչեր այնպէս ինչպէս վարժուած էի զայն լսելու: Թերեւս 75 Հոգի շրջապատած եմ զիս: 5 էն 15 տարեկան տղաք եւ աղջիկներ:

Կը նայիմ եւ միայն ձեռքեր կը տեսնեմ հայ մանուկներու այս բազմութեան մէջ: «Լիբերի», «Լիբերի», «Լիբերի» կը կանչեն անդադար: Կը նայիմ ոտքերուս տակ չէի մագերթով եւ փայլուն աչքերով աղջկան մը, զայն քովս կ'առնեմ եւ կը սկսիմ բաժնել հետս բերած մատիտները, գրիչները, սկաւառակները, շրթնակները, մագիկապարէր, շաքարները եւ գիրքերը: Եթէ նախատեսած ըլլայի անոնց մորտած դէմքերուն արտայայտութիւնները, անոնց կանչերը, որոնք կը յամենան ականջներուս մէջ, եւ անոնց կարկտան հազուատները, աւելին կը բերէի: Խնայելովորէն կը փնտռեմ, մինչ անոնք կը բազմանան շուրջս, բայց կերպընկալէ տարակերպ յատակ կ'երեւի: Ոչինչ մնացած է: «Լիբերի», «Լիբերի» բարձր կ'արձագանգէ ականջներուս մէջ, մինչ կը նայիմ վարժարիւր փոքրիկ ձեռքերու բաց եւ դատարկ: Անմիջապէս իրենք եւս կ'անդարդառունան, թէ ոչինչ մնացած է: Անոնց կանչը կը սկսի մարիլ եւ անունս միայն տարտած կերպով կը թաւալի անոնց լեզուներուն վրայ: Կը հեռանամ եւ կ'ուզեմ արտասուել: Կը հեռանամ եւ կ'արտասուեմ:

Երկու ծնողներս հայ են: Անոնց ծնողները Հայկական Յեղասպանութենէն վերապրած են: Ասիկա առաջին այցելութիւնս է Հայաստան, 10 հազար մղոն հեռու իմ երկրէս: Հայերէն չեմ խօսիր, որովհետեւ ծնողներուս

ծնողները արագ ձուլուած են, երբ Միացեալ Նահանգներ հասած են 1920ական տարիներուն: Հետեւաբար մամող կեանքս «ամերիկացի» եղած եմ, ամերիկեան դպրոց յաճախած եմ եւ ապրած եմ հաւաքականութեան մը մէջ, ուր քիչ հայեր կան: Այս գիւղին՝ Տաթեւի ժողովուրդը շատ քիչ բան ունի, սակայն ինչ որ ունի կը բաժնէ ուրախութեամբ: Ձիս կը հրաւիրեն իրենց տունը եւ մեծ սեղաններ կը պատրաստեն ինծի համար, հաւանաբար գործածելով իրենց շարժական մը ուտելիքի պաշարը, պարզապէս որովհետեւ իրենց հիւրն եմ: Ոչխարներն ու կովերը առուտունն արածելու կ'երթան, մինչ մեր խումբը գործի կ'ուղղուի, եւ կը վերադառնան գիշերը, երբ կ'երթանք ուտելու վարուցի, լուրիկ, պանիրի ու լաւաչի մեր ճաշը: Յաճախ կը ձեռնեք գիւղացիներուն հետ, եւ անունս կենացներու մէջ կը լսեմ շատ աւելի յաճախ, քան՝ ինչ որ լսած եմ կեանքիս 17 տարիներուն ընթացքին, իմ երկրիս մէջ: «Բարեւ», «Ի՛նչ է անունդ», «բարի լոյս» եւ «ի՛նչպէս ես» բառերը դիւրութեամբ եւ ինքնավստահութեամբ կը թաւալին լեզուիս վրայ:

Առաջելութիւնս էր Հայաստան գալ եւ բան մը վերադարձնել այն երկրին, ուրկէ նախնիներս եկած էին: Երբեք չէի ակնկալեր կապուել այս հողին, սակայն տեղ մը կ'ապրեցայ: Հայերէն լեզուի դանդաղ եւ երգեցիկ հնչելը, ջըմ գիւղացիները, որոնք ոչինչ ունին եւ ամէն ինչ կուտան, զրոյցով, պարով ու խնդրով լեցուն ամբողջ երկար գիշերները յիշատակներ են, որոնք դրոշմուած են ուղեղիս մէջ: Կը յիշեմ գիշեր մը, երբ կամաւորներս պտուստ է՛մ Տաթեւ կը վերադառնայինք, եւ երբ պարզ գիւղ տուաւ, ես ինծի հարց տուի, թէ այս գիւղը ե՛րբ տուն դարձաւ ինծի համար: Չէի զգար, թէ հնադարեան գիւղ մը կը վերադառնայի, այլ կը վերադառնայի դէպքի քնապարկս, կարծր գետինը եւ տունս: Միայն պիտի մը ամիս առաջ ոչինչ գիտէի այս գիւղին բնակիչներուն մասին, եւ այժմ անոնք ընտանիքս դարձած էին: Մեծ մայրս մահացաւ վերջերս, եւ ես, որ եկած էի այն վայրը, որ մեծ տեղ ունէր անոր սրտին մէջ, կ'ուտէի նոյն ճաշերը եւ կ'աշխատէի նոյն հողին վրայ, աւելի լաւ կը հասկընայի անոր կեանքը:

Անցեալ տարի հայ գրագէտ մը՝ Ադամ Պաղտասարեան ինծի ըսաւ, թէ հայութիւնը միշտ «ոսկորներու» մէջ պիտի ըլլար, որովհետեւ հայ էի: Այդ հաստատուած ներշնչեց զիս եւ հե-

տաքերու թիւնս սրեց, որպէսզի այցելեմ Հայաստան եւ կապ մը գտնեմ իմ ժառանգութեան հետ: Ամառ մը Հայաստան անցընելէս ետք այժմ գիտեմ, թէ հակառակ ամերիկեան կենցաղիս, մէջս կայ բան մը, որ հայկական է: Տաթեւի գիւղացիները ունին ճշմարիտ հարստութիւն մը: Կեանքի ուրախութիւնը: Անոնք շատ աւելի բարձրաձայն կը խնդան, քան ոեւէ ժողովուրդ, որուն հանդիպած եմ, եւ առանց անձնասիրութեան կու տան ինչ որ ունին, հակառակ իրենց սահմանափակ պայմաններուն: Անոնց ուրախութիւնը կարելի կը դարձնէ անոնց գոյատեւելը:

Անոնք նոյն հաճոյքով ու լաւատեսութեամբ վարակեցին զիս: Նաեւ գիտեմ, թէ ամբողջական պիտի չզգամ, մինչեւ որ դարձեալ վերադառնամ Տաթեւի նեղ ու փոշոտ փողոցները եւ դարձեալ լսեմ մանուկներուն թաւ հնչիւնները: Կը հաւատամ, թէ Տաթեւը միշտ հետս պիտի ըլլայ, թերեւս նոյնիսկ՝ ոսկորներուս մէջ:

* Էլիզապէթ (Լիբի) Ասլանեան 18 տարեկան կամաւոր մըն է, որ մաս կազմած է «Հող եւ Մշակոյթ» կազմակերպութեան 2002ի ամառային ծրագիրներուն՝ հարաւարեւելաց Հայաստանի Տաթեւ գիւղի մէջ, ուր մասնակցած է գիւղի 150 տարեկան դպրոցին վերանորոգութեան աշխատանքներուն: «Հող եւ Մշակոյթ» կազմակերպութեան 2003ի ամառային ծրագիրը կ'ընդգրկէ հիւսիսային Հայաստանի Լոռի-Տաւուշ մարզի Այրում գիւղի մէջ արեւու ջերմութեամբ պտուղ չորցնելու շինութեան մը վերանորոգութիւնը, Արցախի մէջ Տուշիի գլխաւոր հիւանդանոցի հիւանդներու սենակներուն վերանորոգութիւնը, ինչպէս նաեւ Արարիկի հիւսիսային Բիսապս գիւղի մէջ վերանորոգութեան աշխատանքները: Նաեւ քրքրաբերողներ կրնան զիմել կազմակերպութեան համագործակցութիւնը (հասցէ՝ www.landandculture.org, ուղղակի կապ՝ info@landandculture.org), յաւելեալ տեղեկութիւն ստանալու եւ մասնակցութեան զիմումնագիր ներկայացնելու համար: Թեւեւ զիմումնագիր ներկայացնելու պայմանագրով Մայիս 186 էր, սակայն կազմակերպութիւնը տակալին զիմումնագիրներ կ'ընդունի:

ԱՅՍ ՅԻՄԱՐ ԹԻ ՇԸՐԹԸ ԻՄԱՍՏՈՎ ԼԵՅՈՒՆ Է

«ԵՍՈՃԻԵՅԹԸՑ ՓՐԵԱ»-Ի ԹՂԱԿԻՑ ՃԻՄ ԸԱՅՆՑ ԸԱՐՑ ԿՈՒ ՏԱՅ, ԹԵ ՏԱՐԵՐ ԵՐԿՐՈՆԵՐԸ ԻՐԵՒ ՅԻՇԱՍԱԿ ԲԵՐՈՒՄ ԹԻ ՇԸՐԹԵՐԸ ՊԱՐԶԱՊԵՍ ԶՈՒՄԹ ՅՈՒՃԱՆՈՒԵՐՆԵՐ ԵՆ, ԹԵ ԵՐԿՐԻ ՄԸ ԸՈԳԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԽՈՐԴՂԱՆԵՆ: ՕՐԻՆԱԿ, Ի՛ՆՉ Կ'ԸՍԵ ԱՐԱՐՍ ԼԵՐԱՆ ՊԱՏԿԵՐՈՎ ԹԻ ՇԸՐԹ ՄԸ

Բարեկամներս բոլորն ալ նոյն բանը ըսին, երբ իրենց ըսի, թէ Տաթեւի տան կ'երթայի՝ «Լա՛ւ է, չմոռնաս թի-շըրք մը բերելու ինծի»: Ի՛նչ յուսախաբութիւն կը պատճառեմ: Տաթեւի տան մէջ թի-շըրք չկայ, այսինքն՝ տպագրուած նկարներով թի-շըրքներ չկան: Չկան նաեւ զբօսաշրջութեան վայրերու յատուկ պատկերներով բացիկներ, բանալիի շղթաներ, շնիկներու արձանիկներ կամ անուշաբոյր տախտակներ՝ երգիծական գրութիւններով: Չբօսաշրջութեան աղբ մը, որուն բացակայութիւնը դատարկ տեղ մը ձգեց սրտիս մէջ: Ասիկա յուզիչ խոստովանութիւն մըն է անձի մը կողմէ, որ ինքզինք թիթեթ բաներով զբաղող մը չի համարեր:

Եթէ տեղ մը քանի մը օրէն աւելի մնամ աշխատանքի կամ հաճոյքի պատճառով, կը սկսիմ երեւակայել, թէ արդէն կը տեսնեմ վայրին ընդհանուր պատկերը եւ բարեկամներուս կը գրեմ երկար ամակներ, լեցուն՝ հաւանաբար ճիշդ դիտարկութիւններով տեղույն մշակող թիւն, քաղաքականութեան եւ տնտեսութեան մասին: Չանոնք կը կարգան ուշադրութեամբ, սակայն կը զգամ, թէ երես կը կախեն, ըսելով՝ բարեկամս Տաթեւի տան գնաց եւ միայն այս յիմար նամակը գրեց:

Անոնք թի-շըրք կ'ուզեն, եւ իրաւունք ունին, եւ ալ կ'ուզեն: Ակադեմիականներ եւ փիլիսոփաներ, որոնք ստույգութիւններ կը կազմեն յետադի աշխարհին մէջ ազգային իւրաքանչեւութիւններ գտնելու ղեկավարութեան վերաբերեալ, յուշուրուէր թի-շըրքը կը նկատեն գերագոյ՝ աղաւաղուած: Նման թի-շըրք մը հագնել կը նշանակէ, թէ բարարար դրամ ունիս աշխարհի տեսարան վայրերը այցելելու համար, սակայն ոչ բաւարար խելք, որովհետեւ զանոնք դիտելէ ետք չի գալարկը մը կը փնտռես, փոխանակ տարբեր բան մը ընելու: Նման մտածողութիւն մը անտրամաբանական է ինծի համար:

Թի-շըրքը կարելի ըլլայ գնել որեւէ երկրի մէջ, բայց Սյուրիանիսէն: Ճիշդ է, կարելի է նաեւ գնել սլովակիական գեղղկական ազգային տարագ մը, սակայն հաւանական չէ, որ զայն հազնիս հանրահանութի մը բրթայու եւ տուն վերադառնալու համար: Աւելին՝ անիկ մեզի կը զլանայ ճամբորդութեան հաճոյքներէն մէկը: Հպարտանալ, թէ տարաշխարհիկ վայր մը այցելած եմք: Կարգ մը զբօսաշրջիկներ իրենց այցելած երկիրներուն մէջ գեղանկարներ կը գնեն: Բայց վերջը կը տեսնեն, թէ տեղական շուկային մէջ այնքան գեղեցիկ նկատուած վառ գոյները սուր կերպով կը հակադրուին իրենց փոքր իւրաքանչիւր կահույքին հետ: Թի-շըրքները, որոնք ենթադրաբար աչքառու եւ կոպիտ են, նման հարցեր չեն յարուցեր:

Սակայն անպաճոյճ թի-շըրք մը կրնայ նաեւ արտացոլել բարդ բովանդակութիւն մը, ինչպէս այն թի-շըրքը, որ գնեցի Երեւանի մէջ՝ անիկա կը պիտի բերէ Արարի տլեռը եւ անոր վրայ արձանագրուած էր «Այու լազիկ Արմինիա» (եւ Հայաստան էի): Ո՞վ է «ես»ը այստեղ: Ե՛ս որ թի-շըրքը հազած էի այս արտասովոր երկիրը այցելած ըլլալու անկեղծ հրճուածքը արտայայտելով, թէ ինքնին լեռը, որ կը յիշեցնէր այն դառն իրականութիւնը, թէ ժամանակին կը գտնուէր Հայաստանի մէջ, սակայն վերջը Թուրքիան զբաւած էր զայն:

Թի-շըրքները հզօր հաստատումներ են, որոնք կ'ըսեն, թէ տուեալ երկիր մը ի՛նչպէս կը տեսնէ ինքզինք, եւ ի՛նչպէս կ'ուզէ, որ ուրիշներ տեսնեն զինք: Գնորդը ուշադիր պէտք է ըլլայ, որպէսզի չմոռնար: Նոր Ձեռնատայի մէջ խաճկութիւնները այնքան լեցուն են ջրուրի գարդապատկերով թի-շըրքներով, որ օր մը գնեցի հատ մը, մոռնալով, որ այդ մեծանկեց թռչուններէն ոչ մէկը տեսած էի իրական կեանքի մէջ: Եւ այնքան սովորական են երկրին մարտի անունը (Առթիբերոս) կողմ թի-շըրքները, որ պահ մը կրնայ մոռնալ, թէ ընիկ մարտիները ներկայիս լուսանցքային կեանք մը կ'ապրին իրենց երկրին մէջ:

Պարիսի վաճառատուներուն մէջ մթերուած է տարօրինակ թի-շըրք մը, որուն վրայ տպուած է «Չարի» անցարգելին վրայ երեւող «ամերիկեան գօտիէն դուրս կու գաք» նշանը: Այս թի-շըրքներէն մէկը հագնելը ի՛նչ կ'ուզէ ըսել: Թէ Պերիլի պատը այնքան վաղուց փուլ եկած է, որ կարելի է անոր սորսափելի ուրուական վերածել զբօսաշրջութեան խորհրդանշիլ՝, թէ ան պարզապէս թեթեւամիտ անձ մըն է, որ կը ձե-

ւացնէ, թէ Պաղ պատերազմի արկածախնդրութիւններ պարած է: Բարեկամներս եւ ես այս մասին կը մտածենք, երբ մեր թի-շըրքը կը հագնինք:

Ննգկաց ովկիանոսի Մորթիթիուս կղզին տեսարժան իւրաքանակ վայր մը եւ ընիկ հաւաքականութիւն մը չունի: Անոր իւրաքանակ միակ երեւոյթը սոսո թռչունն է, եւ բազմաթիւ թի-շըրքներ կը ծանուցեն այս թռչունը, որ գոյութիւն չունի երկու հարիւր տարիէ ի վեր եւ անհետացած է մարդկային յիմար անձնասիրութեան պատճառով:

Մոսթարի (Պոսնիա-Հերցեգովինա) մէջ վաճառող թի-շըրքներուն վրայ տպուած են քաղաքին շքեղ կամուրջի պատկերները: Կամուրջը ունի կրծող եւ քանդուած էր 1994ին: Թերեւս ասիկա լաւատեսութեան նշան մըն է: Կը ծրագրուի կամուրջը վերահաստատել, հետեւաբար թի-շըրքները թերեւս կը պատկերան այն, ինչ որ կարելի է տեսնել աւելի լաւ ժամանակներու մէջ:

Ինքնաշարժով քանի մը ժամ հեռու Սարայեւոյի մէջ եւս թի-շըրքի գուարթ մթնոլորտը ազներեւ է: Անոնք ծիծաղաբարձ գրութիւններ կամ պատկերներ չեն կրեր, այլ միայն՝ «Պոսնիա - Հերցեգովինա» անունը: Սակայն ասիկա կ'ապացուցէ նոր վստահութիւն մը երկրի մը նկատմամբ, որ ժամանակին քայքայուելու սեմին էր:

Ամէնէն աւելի այս պատճառով կը սիրեմ թի-շըրքը: Ժողովուրդներ անոր միջոցով կը հաստատեն, թէ իրենց երկիրները հպարտ են, եւ թէ՛ մարդիկ պէտք է այցելեն եւ տեսնեն զայն: Տաթեւի տան այդ մակարդակի ինքնավստահութեան չէ հասած տակալին, հակառակ իր գեղատեսիլ լեռներուն եւ մեծապէս տպաւորիչ ծառուրիներուն:

Հետեւաբար Տաթեւի տանի մէջ փոխանակ մարտերներ գնելով ժամանակա սպանելու, զայն լեցուցի կարգալով գիրք մը շրջանի երկար եւ բարդ պատմութեան վերաբերեալ: Գիրքը յատուկ ուշադրութեան առարկայ դարձուած էր իմայիլ Մոսնին. 1100 տարի առաջ ապրած անուանի ցեղապետ մը, որուն անունով կը կոչուի երկրին դրամանիշը:

Գիրքին մէջ տեղ գտած անոր դիմանկարները կը պատկերէին նիհար դէմքով եւ խորթափանջ վրայ մեղմ մարմը, որուն շուրթներուն կը կարծես ծիպուած մը միտածանակ վճռական եւ կշռադատող նկարագիր մը կ'արտացոլէր: Անոր դիմանկարը հոյակապ պիտի ըլլար թի-շըրքի մը վրայ:

ՃԱՄԲՈՒ ԳԻՏԵՆԱԿԱՆՆԵՐ

«ԹԱՅ» ԸՄԱԲԱԹԵՐԹԸ ԳԱՂԱՓԱՐ ՄԸ ԿՈՒ ՏԱՅ ՆՈՐ ԸՐԱՍԱՐԱՌԱԾ ԼԱՒԱԳՈՅ ՌՈՂԵԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ, ԵՒ ԿԸ ՄՂԵ ՄՏԱԾԵԼՈՒ, ԹԵ ԻՆՉՈՒ ԿՈՒՉԵՆԵ ԿԱՍ ԳՅԵՔ ՈՒՉԵՐ ԾԱՄԱՐՈՂԵԼ

Լղեգիրներ ժամանակին գիտէին, թէ ի՛նչ կ'ընէին: Հեմինկուէյ օրինակ էր. ամբարտաւան եւ յիստրոստացող, ան գրիչի փոխարէն՝ սպանաւան դանակ մը կը կրէր: Սակայն Հեմինկուէյի ժամանակներէն ի վեր ուղեգիրներ նուազ կը չարչարեն իրենք գիրենք, աւելի անկեղծ են, կամ երկուքը:

Ձեռով մը փրկութիւն է ասիկա: Հեմինկուէյ կը զբաղանէր, թէ ծոյլ արարածներ ենք, եթէ չենք ուզեր ժամփոխալի մէջ ջրամարտ մը դիտել: Նոր հրատարակուած ուղեգրութիւններ մեզի կ'ընծեան միտածանակ այլ տեղ մը փոխադրուելու եւ նոյն վայրը մնալու հաճոյքը: Ինչպէս Ալէն տը Պոթնի կը գրէ իր «Տի արթ աֆ թրէվլը» գիրքին մէջ. «Կրնանք լաւագոյն ձեռով ապրի վայրի մը մէջ, երբ յաւելեալ մարտահրաւէր չենք դիմագրաւեր հոն ըլլալու»: «Տի արթ աֆ թրէվլը» ոչ աւանդական ուղեգիրք մըն է: Անիկա չի վերաբերի յատուկ որեւէ տեղ մը ճամբորդելու, այլ փիլիսոփայական խորհրդածութիւն մըն է ինքնին ճամբորդելու արարքին մասին: Տը Պոթնի մասնագիտութիւնը առօրեայ կեանքին բնագանցական պատկերն է: Ան մեզ կը քաջալուծէ, որ փայտային ճամբորդութեան պարզեւեմ փոքր կ'ալթիները, ինչպէս՝ Փրոփանսի մէջ Նոտի մը, որ կ'ալթի, թէ վան կոկի մէջ դեղանկարէն դուրս եկած է, կամ անծանօթի մը խոհանոցը, որ ակնթարթի մը մէջ կը տեսնենք, սուրացող շոգեկապի մը պատուհանէն:

Թոմ Սթոնի «Տը սամր արթ մայ կրիթ թաւեռնա» ուղեգրութիւնը աւելի կեդրոնացած է երկրային հաճոյքներու վրայ, ինչպէս՝ ուտելիք, ըմպելիներ, արեւ եւ աւազ: Երբ անոր բարեկամներէն մէկը կ'առաջարկէ ճաշարանի մը վերակացուն դառնալ յունական Փաթմոս կղզին վրայ, ան անմիջապէս կ'ընդունի, սակայն չունի մը կ'անդարդառանայ, թէ իր պաշտօնը «Ջորպա տը կրիթ»ին չի նմանիր: Ան ստիպուած է յարմարիլ մինչեւ առաւօտ գուրագոյն զբօսաշրջիկներու, առաւօտեան ժամը 7:00ին սուրճ պահանջելու ձկնորսներու եւ բամբասող տեղացիներու, որոնք կը վախնան չար աչքերէն:

Սակայն ինչու տունէն հեռանալ, երբ կարելի է տուն միասին տանիլ: «Թերիլը թրեւլը» գիրքը կ'ոգեկոչէ ամերիկացիներուն սէրը շարժական բնակարաններու նկատմամբ: Գիրքը կը

պարփակէ 1950ական տարիներէն լուսանկարներ, որոնք մէջ գիշերազգեստով մանուկներ դուրս կը դիտեն արցունքի կաթիլի նման ձեւաւորուած շարժական բնակարաններէ, եւ կը տպուին: Գիրքը կը կեդրոնանայ յոյժ անբեւաւալելի ժամանակի մը վրայ, երբ շարժական բնակարանները նորաձեւութիւն էին:

Եթէ Հեմինկուէյ ճամբան հանդիպէր Ռապրթ Թուրիկրի, հաւանաբար պիտի ծծէր զայն: Այս գրագէտին ամօթխած եւ գիտական մօտեցումով «Տի էքսթիւնըլըն ջրապ» գիրքը կը վերաբերի եղնիկի մը, որուն եղնիկները ստեւ եւ նային: Անիկա ունի ուղտի նման վիզ մը եւ էշու պոչ մը: Կը կոչուի «Փէր Տէյլիտի եղնիկ»: Դարեր շարունակ միակ ֓էր Տէյլիտի եղնիկները կ'ապրէին պարսպապատ զբօսայգիի մը մէջ, Պէյնիկէյն դուրս, ուր մինչեւ Փէր Տէյլիտ քաղաքի զուլուտը միայն Չինաստանի կայրաքաղաքը ունէր որսալու գանոնք: Փէր Տէյլիտ քանի մը եղնիկներ պարսիկ կերպով դուրս կը հանէ Չինաստանէն, եւ անոնք կը տարածուին Արեւմտեան մէջ: Թուրիկը անոնց հետքերով կը շրջի աշխարհը, Չինաստանէն մինչեւ հին գիրքերու շուկայ մը՝ Եգիպտոսի մէջ եւ անգլիացի դուքսի մը շքեղ բնակարանը: «Տի էքսթիւնըլըն ջրապ» գրքի մէջ կը կորսուի պատմութեան, կենսաբանութեան եւ ինքնակենսագրութեան միջեւ: Ինչպէս լաւ ճամբորդները գիտեն, կարգ մը ճամբաներ պէտք է անտեսել, նոյնիսկ եթէ անոնք ոչ մէկ տեղ կ'առաջնորդեն:

Հեմինկուէյի ետք ուղեգրութեան մէջ իշխող «առիւծը»՝ Վ. Ս. Նայփօլն է, որ երկու տար

«ԳԻՇԵՐԻ ԻՉԱՒ»

Շարունակուած՝ 6րդ էջէն

Գիշերը կարծես թափանցիկ լինէր՝ պարզ, ջինջ, պայծառ: Աստղերը մի ամբողջ խումբ էին կապմել, կարծես պարուստ էին երկնակամարում մառախուղի մէջ, թուն էր թէ աստղերը՝ երկնքի տիրակալները լինեն և ոչ ոքի հետ չեն ուզում կիսուել: Օդը մաքուր էր թարմ, լիճը հանգիստ: Ամէն օր չէ որ կարելի է տեսնել այս տեսարանը, նա անմիջապէս գրաւում է մարդու սիրտը: Այս ամէն ինչը կարծես քանդակած լինէր վարպետի ձեռքով: Մութ անտառը դարձել էր լուսաւոր, թափանցիկ վերմակ: Գիշերն թուն էր անվերջ: Եւ ինչպէս քնքուն կին հրապուրում էր իր պարով և հնչիւնով: Գիշերը ամուր կանգնած էր:

Գիշերային կենդանիները աշխուժացան և դուրս եկան որսի: Գայլերը նայում էին լուսնին և ոռնում էին կարծես պատի էին տալիս նրան, իսկ լուսինը գոհ էր խրոխտ ինչպէս առիւծ աւելի էր պայծառանում՝ լուսաւորելով գայլերի ճանապարհը:

ԻՎԱՆԵԱՆ ԱՐՄԵՆ

13 տարեկան

«ԱԼԵԿՍԱՆԴՐՈՒՄԸ ԾՈՎԸ»

Նկարիչը տխուր կանգնած էր ծովի ափին: Տխուր էր, քանի որ իր նկարները ոչ ոքի դուր չէին գալիս:

Ծովի ալիքները քամուց օրօրում էին: Ալեկոծուած ծովը նոր միտք առաջացրեց... Վերջերս վրձինը և նկարեց այնչափ անուշ ծովի ալիքները՝ կապուտ երկնքի տակ:

Նկարը հիասքանչ էր, թուն էր, թէ ալիքները քո վրայ են գալիս:

Տղան ներկայացրեց նկարը: Բոլորը հաւանեցին այն: Նկարը փակցրեցին ցուցահանդէսի ամենաերեւացող տեղում, իսկ աղքատ տղան վերածուեց հոշակաւոր նկարչի: Սակայն նա գիտակցում էր, որ նրան օգնել է այն այնչափ անուշ ծովը: Եւ ամէն օր տղան գալիս էր ծովի ափ, նայում ալիքներին, և շնորհակալութիւն էր յայտնում նրանց:

ՆԱՐԻՆԵ ՄՈՒՐԱՏԵԱՆ

15 տարեկան

ՃԱՏՐԱԿ

1

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍԷ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՍՈՎ



ՍՓՐԵԿԱԿՐ Ժ. - ՓԱԺԿԸՆ ՈՒ. (2002)

2

ՍԵՆԵՐԸ ԿԸ ՄԱՂՍԷ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՍՈՎ



ՈԱՐԸՊ Ս. - ՍՈՒԹԱՐ

3

ՍԵՆԵՐԸ ԿԸ ՄԱՂՍԷ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՍՈՎ



ՊՐԻՆԷԼ Ս. - ՎՈԼԵՈՎ Ս.

4

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍԷ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՍՈՎ



ՋԵԶԱՐՈՒՆ

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սինակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

★ ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)

Եթէ կ'ուզէք, որ ծրագիր մը յաջողի, պէտք է նախ հաւատարման: Ասիկա լաւագոյն մեթոտն է. այն ատեն կը յաջողիք: Հաւատք՝ գործին հանդէպ:

★ ՅՈՒՆ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Ձեր մանր ու մուր հոգեքը մէկ կողմ ձգած էք այսօր, իսկ ձեր տրամադրութիւնը հասած է իր գագաթնակէտին: Օրը փայլուն է ամէն տեսակետով: Ուրեմն գուարանեք:

★ ԵՐԿՈՒՄԵՆ (22 Մայիսէն 21 Յունիս)

Դուք ձեզ գրկած էք կարգ մը բաներէ, հասնելու համար ձեր ծրագրին յաջողութեան: Շարունակեցէք նոյն բաժով, որպէսզի յաջողութիւնը կատարեալ ըլլայ:

★ ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Եթէ գործի վերաբերեալ պաշտօն մը կայ, ներկայացուցէք ձեր մէկ ծանօթը, փափկանկատութեամբ: Եթէ դուք չէք ուզած այդ պաշտօնը, ուրիշ արժանատի մը առաջարկեցէք:

★ ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ուսուցիչներ լաւ դաս մը պիտի քաղեն անցնող կրթական տարեշրջանի փորձառութեան: Անշուշտ յառաջիկային պիտի բարելաւէք ձեր ուսուցման մեթոտը:

★ ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Ձեր ընկերը կամ ընկերուհին պիտի համաձայնի ամուսնանալ ձեզի հետ, բայց դուք կ'ուզէք քիչ մը եւս ձգձգել հարցը, բոլորեթիւ համար իր գագաթնակէտը: ★ ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Մէկը պիտի հակառակի շարունակաբար ձեզի, եւ ինչ որ դուք ըսէք՝ պիտի չընդունի: Հեռացէք այդ անձէն եւ օրը ամառացեցէք առանց ջրայնամալու: ★ ԿԱՐԻԺ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Աշխատանքի մարզին մէջ ձեզ իբրեւ տիպար օրինակ պիտի նկատեն, ձեզի ցոյց տալով նոր աշխատողներու: Այս գովեստին զիմաց մնացէք համեստ: ★ ԱՂԵՂՆԱԻՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Պիտի հանդիպիք անձ մը, որուն հետ յարաբերութեան ձեր կապը մը պիտի ունենաք: Անոր մէջ պիտի գտնէք ձեր նշանակալի համապատասխան ապրումներ: ★ ԱՅՅԵՆԶԻԻ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Ապապրանք մը կատարած էք ու անհամբեր էք ստանալու: Այդքան մի՛ աւապարէք. ստուգեցէք ձեր պահանջած թուակահիւն եւ ստացման ժամանակին տարբերութիւնը: ★ ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Եթէ բազմաթիւ գաւակներ ունիք, անոնք այսօր պիտի ձեռնարկեն ընտանեկան պալուր մթնոլորտ ստեղծելու գործին: Ի վերջոյ ներդաշնակութիւն պիտի ստեղծուի ձեր տան մէջ, գոնէ նուազագոյն քանի մը օրուան համար: ★ ԶՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Դրամատան հետ ձեր հաշիւները մաքուր են. ոչ մէկ յիշեցում պիտի ըլլայ ձեզի, որովհետեւ եղած էք պարտանանալ: Շարունակեցէք նոյն նամբան:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՐԱՒԱՏՈՒՆ / ՅՈՒՅԱԿԱՆԴԵՍ / ԶԲՈՍԱԿԵՐՉՈՒԹԻՒՆ

ԼԱ ՅՈՒՆԹԵՆԻ ԱՌԱԿՆԵՐԸՆ ՆԵՐՇՆՉՈՒԱԾ ԳԾԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՅՈՒՅԱԿԱՆԴԵՍ

Լիբանանցի և օտար տասնհինգ զէնդանկարիչներու հաւաքական մէկ ցուցահանդէսը տեղի կ'ունենայ «Լը փուա» ցուցասրահին մէջ: Հետաքրքրական է այն, որ մեծ մասամբ գծանկարներէ բաղկացած է մանուկներու յատուկ գծանկարներ յիշեցնող այս գործերը ներշնչուած են ֆրանսացի Լա Յոնթէնի առականներէն:




Լիբանանցի, արաբ և ֆրանսացի այս արուեստագէտները ժամանակակից գծանկարներու ռոմանտիկ շնչով զոյն ունենում են Լա Յոնթէնի մեծ թիւով առականներուն: Անոնք պատկերապարուստ ձեւով իրենց մէջ կը խտացրեն միջազգային գրականութեան այս մեծ դէմքին առականներուն բովանդակութիւնը և անոնց ետին թաքնուած իմաստները: Գծանկարները նաեւ յաջողած են արտայայտել Լա Յոնթէնի առականներուն սրամտութիւնը, հեզանքը և գոյ-

Լա Յոնթէնի «Փողը եւ ռճգեղջիւրը» առական գծանկարը

և բարոյական արժէքներու շատագովութիւնը: Իրաքանչիւր արուեստագէտ քանակաբար իր ընտրած առականներուն տուած է իր ոճի պատկերապարուստ արտայայտութիւնը: Անոնցմէ ոմանք դիմած են պարզ ու յստակ արտայայտչաձեւերու՝ իրենց գծանկարները նմանցնելով մանկական պատկերներու: Անոնք գծուած են յստակ և պարզագուծ գիծերով և գոյ-

ՕՂԵՐԵՆՈՅԹ



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 23 ՅՈՒՆԻՍ 2003
ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ
ՋԵՐՄԱՍՍՏԻՃԱՆ ԾԵՐԵԿ՝ 28°C
ԳԻՇԵՐ՝ 21°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 80%

ՃԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԿՐՈՒԹԵԱՆ
«Ազդակ»-ի մէջ ազգային կամ տնտեսական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցմի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ԽԱՉԲԱՍԻ ԹԻՒ 5468
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows for a puzzle.

ՇՈՒԹ 5467
ԽԱՉԲԱՍԻ
ԼՈՒԾՈՒՄԸ
1. Աստուծոյ ստորագելիներէն:
2. Ռուսական նախկին անջրպետակայան - Տղեկ:
3. Հերձաբարէ տախտակ:
4. Խաղ, կատակ - Լոկ:
5. Նիհար - Մոնկոլ կրօնաւոր:
6. Հարսին հայրը՝ փեսային նկատմամբ - Պարտիզանի գործիչ:
7. Մարդ արարած:
8. Գարշապար - Շէն:
9. Կողմ - Պոլսահայ մեծատնի տրուած տիտղոս:
10. Ֆրանսական գետ - Տարուան բաժանումներէն:

1 2 3 4 5 6 7 8 9 10
1 Ա Ս Ո Ղ Ղ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ
2 Բ Ո Ւ Ր Գ Պ Մ Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս
3 Ե Ղ Վ Վ Վ Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս
4 Ղ Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս
5 Ա Ղ Լ Ե Լ Ո Ւ Թ Ի Ս Ս Ս Ս
6 Թ Ր Լ Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս
7 Ա Ս Ր Ե Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս
8 Ս Ր Ե Թ Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս
9 Գ Ե Ր Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս
10 Ա Վ Կ Ի Ր Ա Ն Ե Բ Ս

ԱՉԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՌԱՄՁ
23 Յունիս 1953

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՕԳՆ. ԽԱՉԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Երեկ Կիրակի, 21 Յունիս, առաւօտեան ժամը 10:30ին սիւնեացի Ռիվոլի ընդարձակ սրահին մէջ տեղի ունեցաւ Լիբանանահայ Օգնութեան Խաչի տօնակատարութեան հանդէսը, խուճկեցաւ բազմութեան մը ներկայութեան, որ եկած էր իր յարգանքի ու համակրական գգացումներու տուրքը մատուցանելու կնոջական այս մեծ կազմակերպութեան, որ հետզհետէ կ'ուճեցնուի եւ իր գործունէութիւնը կ'ընդարձակէ հայ կեանքի բոլոր մարզերէն ներս: Օրուան նախագահուի եւ Շրջանային Վարչութեան քարտուղարուի տիկին Լ. Սատուցի, յայտնելէ ետք, թէ հպարտութիւնն ունի բանալու այս հանդէս-տօնակատարութեան, ուրախութեամբ յայտարարեց, թէ այս տարուան հանդէսը կը ստանայ ընդհանրական բնոյթ՝ մեր մէջ ներկայութեամբ Ամերիկայի Հայ Օգնութեան Միութեան եւ Անչալի ներկայացուցիչ տիկին Զուպէլ Սերորեանի: Այնուհետեւ տիկին Լ. Սատուցի կարգաւ կ'ընթացնէր Օգնութեան Խաչի միամեայ տեղեկագիրը, որմէ ի յայտ կու գայ, թէ անցնող տարեշրջանին Օգնութեան Խաչը ունեցած է 2323 անդամուհիներ եւ 349 արձուկներ, բաժնուած՝ 17 մասնաճիւղերու: Ապա, յարգելի տիկինը ինքնաբերաբար յիշեց այն իրագործումները, որ Օգնութեան Խաչը ունեցած է կրթական, բարեսիրական եւ դաստիարակչական մարզերու մէջ: Տիկին Լ. Սատուցի ցաւ յայտնեց, թէ կամքէ անկախ պատճառներով այսօրուան տօնակատարութիւնը կը զուգահեյլի հոգեւոր յայտարարման մահուան Ա. տարեիցին առիթով կազմակերպուած հոգեհանգստեան արարողութիւններուն եւ ազգային իշխանութեանց ներողամտութիւնը խնդրեց:

ՄԻՆՉ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԴԷՄ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ ԱՆԸՆԴՄԵՉ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԻՆ

ՊԱՂՏԱՏԵՆ ԸԻՄԻՍ ՈՒՂՈՒՈՂ ՔԱՐԻԴԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿ ՄԸ ԹԻՐԱՆ ԴԱՐՁԱԻ ԽԱՓԱՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԱՐՔԻ

Իրաքեան քարիւղը, որ երէկ միջազգային շուկայ պիտի վերադառնար, դարձեալ ստեղծուեցաւ խափանարարական արարքի մը պատճառով: Պաղտատէն հիւսիս ուղղուող քարիւղատար խողովակի մը մէջ պայթում մը տեղի ունեցաւ: Ըստ շրջանի բնակիչներուն պայթումը խափանարարական արարքի արդիւնք էր: Ամերիկեան ուժերը, սակայն, յայտնեցին որ պատճառը յայտնի չէ: Թուրքիայէն արտածուած ալ քանի մը օրով առկախուեցաւ նորոգութեան աշխատանքներու պատճառով:

Միւս կողմէ, ամերիկեան ուժերուն դէմ յարձակումները կը շարունակուին եւ հակառակ բոլոր միջոցառումներուն Սատտամ Հիւսէյնի հաւատարիմ պինդակները տակաւին հակակշիռի տակ չեն առնուած: «Ուաշինկթըն Փոսթ»-ի մէջ լոյս տեսած տեղեկագիրի մը համաձայն, Սատտամի հաւատարիմ ուժերը կազմակերպած են ցանց մը՝ «Վերադարձը», որուն թիրախն է երկիրէն հեռացնել ամերիկեան զրաւող ուժերը: Ըստ օրաթերթին, յիշեալ ցանցն է պատասխանատուն ամերիկեան ուժերուն դէմ ցարդ գործուած յարձակումներուն մէկ քանիին: Օրաթերթը կը գրէր նաեւ, որ «Աուտա» (վերադարձ) շարժումը կը ֆինանսաւորուի հարուստ իրաքցիներու կողմէ: Ըստ տեղեկագիրին շարժումին անդամակցող իրաքեան չիւր իրաքցի կը ստանայ

հապար տոյար: Սատտամ Հիւսէյնի ճակատագիրը տակաւին յստակ չէ, սակայն իրաքի մէջ ամերիկեան քաղաքային իշխանութեան ղեկավարը՝ Փօլ Պրեմըր յայտարարեց, որ ամերիկեան ուժերը վճռած են վերջնական հաստատում մը կատարել նախկին ղեկավարին ճակատագիրին մասին ու ապա՝ իրաքցիները համոզել, որ պէտք է գործակցին յետպատերազմեան կառավարութեան հետ: Պրեմըր աւելցուց, որ Սատտամի ճակատագիրին մասին անորոշութիւնը առիթ կու տայ Պաասի հետեւորդներուն հաւատալու, որ ան տակաւին ողջ է եւ անոր իշխանութիւնը պիտի վերահաստատուի: Հետեւաբար, անհրաժեշտ է ու հրամայական, որ Սատտամի ճակատագիրին մասին յստակ ու հաստատ տեղեկութիւններ հրապարակուին:

● ՄԱԿԻ ընդհանուր քարտուղար Քոֆի Անան պահանջեց, որ իրաքի համար ալ մշակուի «քարտէս» մը՝ գծելու համար երկիրին քաղաքական ապագան:

● ԱՐԱՐԱԿԱՆ Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա ըսաւ, որ արաբական երկիրներուն մեծամասնութիւնը պատրաստ է օժանդակելու իրաքի վերակառուցման եւ ապահովութեան վերահաստատման, պայմանով որ այս գործընթացը ինչալ ՄԱԿի հովանաւորութեան տակ:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ...

Շարունակուած Յրդ ԷջԵԳ

չի գործեր միայն Լիբանանի մէջ, այլ ան մեծ ներդրում կ'ունենայ ինչ որ գտնուի ու ան միշտ կը փորձէ շրջանցել իրեն դէմ գցուող խոչընդոտները եւ յառաջանալ հպարտ, հաստատ քայլերով: Իր խօսքի արարտին ձ. Արեւեան նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ը դպրոց մըն է, որ կը կերտէ զօրաւոր նկարագիրի տէր, ազգային ոգիով տոգորուած սերունդներ:

Սպա Հ.Մ.Ը.Մ.ի գալիկ արժուիկները իրենց յատուկ ոճով ներկայացուցին օձին պարը: Սարգիս Կիրակոսեան ընթերցեց Համաշխարհային սկստուական շարժման ընդհանուր քարտուղար Քոֆի Մօրիսի յայտարարութիւնը, որուն մէջ ան կ'ըսէ, թէ Հ.Մ.Ը.Մ.ի ճՏամեայ երթը յոյսի դաս մըն է համայն մարդկութեան, որովհետեւ անկախ եղաւ այն օձախը, որ իր շուրջ համախմբեց Հայկական Յեղասպանութենէն ճողորմութեամբ օրհնուած իրաքցիները: Սպա Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ողջոյնի խօսքը փոխանցեց Գառնիկ Մկրտիչեան, որ ըսաւ, թէ ճՏ պատկառելի

հիմնուեցաւ աւելի լայն կազմաւորուած մասնակներ, պատանիներ եւ երիտասարդներ պատրաստելու ի խնդիր է այսօր ան աշխուժօրէն այս առաքելութիւնը կր տանի նաեւ Լիբանանի պանապան շրջաններու մէջ՝ իր մասնաճիւղերուն ճամբով: Ռուբը պարտաւորեց, թէ պատմութեան ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ը փաստեց, որ ինք հաւատարիմ կը մնայ այն սկզբունքներուն եւ նպատակներուն, որոնց իրականացման համար ճամբայ էլած է կտրած է պատկառելի ուղի մը: Իր խօսքի արարտին շարժումը Հ.Մ.Ը.Մ.ը ան դիտել տուաւ, թէ այս միութիւնը եղած է ու կը մնայ յաւաքային կրթութիւն ջանքերու ոչինչ խնայող կեդրոնը, որ ոչ միայն կը սորվեցնէ իր շարքերուն մէջ եղողներուն, այլեւ օրինակ կը ծառայէ ուրիշներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ողջոյնի խօսքը փոխանցեց Գառնիկ Մկրտիչեան, որ ըսաւ, թէ ճՏ պատկառելի

սուրբ գործը Հ.Մ.Ը.Մ.ի վեհաքօղը: Սպա հաստատ ու կշռութաւոր քայլերով, դէպի ապագայ նայող, յոյս ու կորով ներշնչող շարքերով տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մասնաճիւղերուն սկստուները, մարդիկները եւ հայկական վարժարաններու աշակերտները:

Շրջանային երէց ճիւղի խմբապետութեան կազմակերպած 2 տարեան դասընթացքի հետեւած երէց պարմաստիկները, հին եւ նոր սերունդներու կամրջումը խորհրդանշող ժամկիւնի պայտիկի ձեռնարկին տակ շարունակեցին համապատասխան հաստատագիրներ: Սպա Հ.Մ.Ը.Մ. Պորձ Համուտ մասնաճիւղի երէցները վարչութեան նախագահութեանը ներկայացուցին կրակի խաղեր ու պատկերներ:

Ձեռնարկին փակման խօսքը արտասանեց Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, որ շեշտը դրաւ Հ.Մ.Ը.Մ.ի տուած



ASHNAG

տիրակալութիւնը կամը: Ան կը նշէ, թէ հպարտութիւն է նոյն ատեն մեծ ուրախութիւն է տեսնել, թէ այդ սերունդին յաջողութիւնը, աշխարհի տարածքին սփռուած ըլլալուն հակառակ, այսօր հայրենի կը խօսին, իրենց մայրենի լեզուով կ'արօքեն ու սկստուական բարեւոյն կու տան: Շարժումը կ'աւելցնէ, թէ այս մէկը ինքնին իրագործում ու յաղթանակ մըն է եւ սկստուութիւնը հայութեան համար կը մնայ պատուաբեր օրրան ու

տարին երու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ը հասաւ իր նպատակին՝ բանի եւ գործով եւ ան միշտ գործեց հայ կեանքին մէջ հասնելու համար ներկայիս իր գրաստան պանծալի դիրքին: Ան նշեց, թէ իր ձեռնարկներուն եւ բանակումներուն ճամբով Հ.Մ.Ը.Մ.ը կը փորձէ միշտ վստ պատկեր հայու ոգին, աւանդութիւններն ու շունչը: «Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան ճՏամեակին առիթով, պարտք կը պզամ անգամ մը եւս վկայելու, որ Հ.Մ.Ը.Մ.ը կազմակեր-

հոգեկան գոհունակութեան եւ անոր առթած հպարտութեան վրայ: Ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ.ը լոկ միութիւն չէ, այլ խաղաղապետող հոսանք, համախմբող կոչ, ոգեշնչող կանչ է մարապնդող կամը: Հ.Մ.Ը.Մ.ը կը հանդիսանայ ազգին ոգի ու կեանք տնող աւելցնող կրօն, հաստատեց Սրբապարտ եւ աւելցուց, թէ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալը միայն անդամակցութիւն չէ, այլ ողջ գիտակցութիւն է թրծող ոգի: Ան նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ի ակունքը ետա-



ASHNAG

հայապահպանման արբան օձախ: Սպա ԼԵՎԱՄի մըրումներուն մասնակցած եւ խնայեան հանդիսացած վարժարաններու ներկայացուցիչներուն յանձնուեցան բաժակներ: Լիբանանի սկստուական ֆետերասիոնի նախագահ Ռուբը Ասիս ողջունելով Հ.Մ.Ը.Մ.ը նշեց, թէ ան մեծ ներդրում ունեցած է Լիբանանի մէջ եւ իր ազդու դերակատարութիւնը ունեցած է սերունդներու կերտման եւ դաստիարակութեան մէջ: Ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ.ը

պութիւն ըլլալէ առաջ ոգի է, գաղափարական ամբակուտ հնոց է, ուրկէ աններուն մասնակցած եւ խնայեան հանդիսացած վկայականը»:

պութիւն ըլլալէ առաջ ոգի է, գաղափարական ամբակուտ հնոց է, ուրկէ աններուն մասնակցած եւ խնայեան հանդիսացած վկայականը»:

ՅՈՐԴԱՆԱՆԻ ԹԱԳԱՒՈՐԸ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖՈՐՈՒՄԻՆ

Յորդանանի Ադաբալա Բ. քաղաքը Շուքի մէջ բացումը կարարեց Տնտեսական Համաշխարհային Ֆորումին, որ կ'արարի այսօր: Ֆորումին կը մասնակցին 65 երկիրներէ 1200 ներկայացուցիչներ:

Բացման խօսքին մէջ, Ադաբալա կոչ ուղղեց լուծելու Միջին Արեւելքի արաբեւիստայէլեան փազնադը, ինչդէս նաեւ վերակառուցելու Իրաքը: Ադաբալա շեջպեց, որ շրջանի ժողովուրդները ծարաւ են կայունութեան եւ աղաւթութեան: Ան ըսաւ նաեւ, որ ծայրայեղականները կը փորձեն ականահարել խաղաղութեան գործընթացը: Ադաբալա քաղաքը յաւանջեց, որ անմիջապէս գործադրութեան դրոյի խաղաղութեան ճամբու քարտէսը:

Պաղեստինեւիստայէլեան փազնադն ու յեփթապերագմեան Իրաքի հարցերը առանցքը կազմեցին երէկուան նիստերուն ալ:

(ԱՖՓ)

- ՃԱՏՐԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒՃՈՒՄՆԵՐԸ
1. 1.Պaf3+ Զg5 2.Պcf6# 1-0
2. 1...Պh1+ 2.Զf2 Պg2# 0-1
3. 1...Պd5+ 2.Զe3 Պe4# 0-1
4. 1.Պa1 Զa6 [1...Զb4 2.Զd2#] 2.Զc6#

Advertisement for National brand air conditioning units. Includes the National logo, an image of an air conditioner, and Arabic text: 'طبيعي الأعلى لأنو الأنقى والأفضل'. Contact information: TTC@cyberia.net.lb, 04-712177, 04-712129/30.